

ՄԵՐ ԱՆԿԻՒՆԷՆ

ՍՐԲ. ԳՐԻԳՈՐ
 ԼՈՒՍԱՒՈՐԻՉ ԵԿԵՂԵՑԻՈՅ
 ՀԱՍԱՅՆՔԸ
 ՆՈՒԻՐԱԿԱՆԱՑՈՒՑ ԻՐ
 ՏԱՐԻՆԵՐՈՒ ԵՐԱՁԸ

ՏՕԳԹ. Ա. ԳԱԶԱՆՃԵԱՆ

Ինչպես մեր այս համարով կ'անդրադառնանք՝ աննախընթաց եկեղեցական կարգով տեղի ունեցած Փասատինայի Սրբ. Գրիգոր Լուսավորչի նորակառույց եկեղեցույ նաակատիփի եւ Օծման արարողութիւնները Հիւսիսային Ամերիկայի Արեւմտեան Թեմի Բարեխնամ Առաջնորդ Յովնան Արք. Տէրտէրեանի հովանաւորութեան ներքին:

Տարիներ երկար փայտաշէն, վերիվայրու մներ արձանագրած, այլապէս հեռի հեռապնդուած ու իրյաղթական աւարտով փառաւորուած երազի մը նուիրականացու մը ողջունելու գերագոյն ուրախութիւնը ունեցանք իրրեւ համայնք, Շաբաթ 8 եւ Կիրակի 9 Սեպտեմբեր 2007-ին: Մեր աջեքում առջեւ իր հրաշափառ հասակով բարձրացող Սրբ. Գրիգոր Լուսավորչի նորակառույց եկեղեցին անվիճելիօրէն նուիրարբերու մէ է իր ազգին՝ նոյն այն ժողովուրդին, որ իր գոյութեան պահպանման հիմնական առանցքներէն մին դարձուցած է նաեւ իր եկեղեցին, հոն ուր կայրհաստատուած է, իր մայրենի հողին, թէ օտար ասիերու վրայ:

Յետադարձ հպանցիկ ակնարկ մը բաւարար պիտի ըլլար վկայակոչելու այդ ոգին:

Դեռեւս Յուլիս 1947-ին, բունով 23 հայորդիները, որոնց աշխատանքով այդ թիւը շուտով պիտի հասնէր 40-ի, ընտրեցին 7 հոգի մը վարչութիւն մը, որ օրուան Առաջնորդ Վարդան Արք. Գասպարեանի արտօնութեամբ, նոյն տարուան Հոկտեմբերին, կը դառնայ Ծխական Խորհուրդ: Այս Խորհուրդը անախով ցեղին ձայնին, առաջին իսկ առիթով Փասատինայ Բաղաճի Միջկան պողոտայի վրայ կը գնէ եկեղեցի մը, որ Առաջնորդ Մամբրէ Արք. Գալփայեանի ձեռնարկով 1957-ին կ'օծուի Սրբ. Գրիգոր Լուսավորչի անունով որ շուտով կ'ունենայ իր առաջին մնայուն ծխատէրը, յանձնին Տէր Գեորգի Թաթուլ երէցանի: Նաեւ, եկեղեցին կ'ունենայ իր Տիկնացի Ընկերակցութիւնն ու դպրաց դասը: Տասը տարի ետք, Ծխական Խորհուրդը կը փոխադրուի Գոյոբաւո Շառուղին, ուր նոր գնուած կառույցը կը վերածուի եկեղեցիի, բովնով սրահով. Առաջնորդ Թորգոմ Արք. Մանուկեան կ'օծէ նորակառույց եկեղեցին 1964-ին:

Վեց տասնամեակներու վրայ տարածուած ազգային, հոգեւոր, բնկերային եւ կրթական ծառայութեան մէջ գտնուող Սրբ. Գրիգոր Լուսավորչի եկեղեցույ տրուած գերազան-

ԲԱՆՏԷՆ ԱԶԱՏ ԱՐՁԱԿՈՒՄԾ ԱԼԵՔՍԱՆԴՐ ԱՐՁՈՒՄԱՆԵԱՆ ԻՆՔՁԻՆՔ ԿԸ ՆԿԱՏԷ ՔԱՂԱՔԱԿԱՆ ՀԱԼԱԾԵԱԼ

«Եթէ ես Ուրբաթ օր քաղաքական բանտարկեալի կարգավիճակում էի, ապա այսօր ես քաղաքական հալածեալի վիճակում եմ. անհեթեթ, շինծու մեղադրանքը դեռ հանուած չէ եւ ոեւէ մէկը ներողութիւն դեռ չի խնդրել իմ անցկացրած այս 4 ամիսների համար», - Սեպտեմբեր 9-ին լրագրողներու հետ հանդիպելով յայտարարեց Հայաստանի Արտաքին Գործերու նախկին նախարար, «Քաղաքացիական անհնազանդութիւն» շարժման համահիմնադիր Ալեքսանդր Արզումանեան:

ՀՀ ղլխաւոր դատախազի որոշումով Սեպտեմբեր 6-ի երեկոյեան Արզումանեան ազատ արձակուած էր՝ քաղաքէն չբացակայելու ստորագրութեամբ:

«Փողերու լուացման» մէջ մեղադրուող նախկին նախարարը յայտնեց, որ ինք պիտի դիմէ Մարդու իրաւունքներու Միջազգային Դատարան՝ բողոքարկելու համար իր կալանաւորումը եւ վերականգնելու իր բարի անունը, քանի որ «իրեն զրպարտել եւ ու պիտակներ կպցրել»:

«Նոյն դատախազն հանրապետութիւնով մէկ յայտարարում է, որ քրէական յանցագործութիւն է տեղի ունեցել եւ մնում է միայն, որ ԱԱԾ-ն հիմնաւորի, որ ինձ ու-



Ալեքսանդր Արզումանեան ազատ արձակուելէն ետք կը զրուցէ լրագրողներու հետ

ղարկուած Սաշիկ Աղազարեանի փողերն անօրինական են: Այսինքն՝ մնում է անել այն, ինչից պէտք է սկսել: Դա հաստատում է այն, որ ինձ 4 ամիս առաջ առանց որեւէ բանի տարել են մեկուսարան ու սկսել գործ սարքել: Մէկը չստացուեց, տեղափոխուեցին միւսի վրայ», - ըսաւ Արզումանեան եւ աւելցուց որ, բոլոր յանձնարարողներն ու պետական պատուէր կա-

ՏԵՂԻ ՈՒՆԵՑԱՒ ԼՂՀ ՆԱԽԱԳԱՅ ԲԱԿՕ ՍԱՀԱԿԵԱՆԻ ԵՐԴՄԱՆ ԱՐԱՐՈՂՈՒԹԻՒՆԸ



ԼՂՀ նախագահ Բակո Սահակեան երդման արարողութեան ընթացքին

Սեպտեմբեր 7-ին Ստեփանակերտի կայազօրային Սպայի Տան դահլիճէն ներս տեղի ունեցաւ Լեռնային Ղարաբաղի Հանրապետութեան նորընտիր նախագահ Բակո Սահակեանի երդման արարողութիւնը:

ԼՂՀ նախագահը իր երդումը կատարեց 17-րդ դարու Աւետարանի եւ ԼՂՀ Սահմանադրութեան

ՀԱՅԱՍՏԱՆ ԴԵՍՈՒԿՐԱՏԱԿԱՆ ԱԿՈՒՄԲԷՆ ՆԵՐՍ ՄԻԱՅՆ ՈՐՊԷՍ ԴԻՏՈՐԴ

Հայաստան միայն դիտորդի կարգավիճակով հրաւիրուած է մասնակցելու դեմոկրատական երկիրներու արտաքին գործոց նախարարներու հաւաքին, որ տեղի պիտի ունենայ Նոյեմբերի Մալիի մայրաքաղաք Բամակոյի մէջ:

Ժողովրդավարութիւններու համայնքը հրապարակած է հաւաքի 126 մասնակիցներու եւ 20 դիտորդ երկիրներու ցուցակը:

Միջազգային խորհրդատուական կոմիտէն, որ որոշած է իւրաքանչիւր երկրի կարգավիճակը, Հայաստանի մասին, մասնաւորապէս, ըսած է. - «Հայաստանի ժողովրդավարութեան զարգացման երկու հիմնարար թերութիւնները՝ ազատ եւ արդար ընտրութիւններու ահնայատ բացակայութիւնը եւ օրէնքի լրջօրէն թուլացած իշխանութիւնը, մնայուն կերպով կը հանդիսանան բարեփոխումներու ճամբուն հիմնական խոչընդոտները»:

Ատրպէյճան եւս, Հայաստանի նման հաւաքին կը մասնակցի դիտորդի կարգավիճակով, մինչդեռ Վրաստանը որպէս մասնակից հրաւիրուած է:

ՓԱՍԱՏԻՆԱՆ ՕԺՏՈՒԵՑԱՒ ՀԱՅԿԱԿԱՆ ՃԱՐՏԱՐԱՊԵՏՈՒԹԵԱՆ ՇՔԵՂ ԵԿԵՂԵՑԻՈՎ ՍԸ

Վերջապէս Փասատինան ունեցաւ իր հոյակերտ եկեղեցին, որ կու գայ փոխարինելու նախկին փոքր կառույցը: Աւելի քան տաս տարիներու հետեւողական աշխատանքները իրենց արդիւնքը տուին եւ այսօր դէպի երկինք բարձրացող իր գմբէթով՝ ամէն կողմէ տեսանելի կը դառնայ Ս. Գրիգոր Լուսավորչի Հայաստանեայց Առաքելական եկեղեցին:

Արդարեւ, Կիրակի Սեպտեմբեր 9ին, 2007 պատմական անմոռանալի օր մը եղաւ նորակառույց եկեղեցին համար, քանի որ այդ օր տեղի ունեցաւ օծման եւ նուիրագործման արարողութիւնը:

Օրուան պատարագիչն էր Արեւմտեան Թեմի առաջնորդ Գերշ. Տ. Յովնան Արք. Տէրտէրեան: Սուրբ սեղանին կը սպասարկէին եկեղեցու նախկին հովիւներ Գերայ. Տ. Ասպետ Վրդ. Պալեան եւ Արթ. Տ. Մուշեղ Ա. Բհնյ. Թաշճեան:



Փասատինայի նորակառույց եկեղեցույ մուտքը

Բերնէ բերան լեցուն եկեղեցին մէջ կը նշմարուէին մասնաւոր հիւրեր յանձինս՝ Գերշ. Տ. Արսէն Արք. Պէրպէրեան, առաջնորդական փոխանորդ Գերայ. Տ. Տաճատ Ծ.

ՐԱՅԱՍՏԱՆԵԱՆ ՄԱՍԻՍ

ԵՐԿՆՔԻՑ ԵՐԵՔ ԽՆՁՈՐ ԸՆԿԱԲ՝ ԿԱՐՉԱՊԵՏԻՆ, ՆԱԽԱԳԱՎԻՆ, ԸԱՍԱՐԱԿՈՒԹԵԱՆԸ

Գեղլապի անցկացրած, եւ հանրապետական մամուլում հրապարակած վերջին, առայժմ վերջին հարցումը, կարելի է համարել ամպրոպ ներքաղաքական խաղաղ երկնակամարում: Այն ժամանակ, երբ բոլորը միաբերան ասում են, թէ Սերժ Սարգսեանին այլընտրանք չկայ, իսկ ընդդիմադիրներն էլ միաբերան, իրենց գործողություններով, հաստատում են այդ տեսակետը, յանկարծ ի յայտ է գալիս Գեղլապը եւ ցոյց տալիս միանգամից երեք այլընտրանք: Եւ ինչն է հետաքրքիր՝ երեքն էլ մի բոլոր: Կամ գրեթե մի բոլոր, եւ հաստատ մի գլուխ բարձր Սերժ Սարգսեանից: Սակայն քաղաքական դաշտը կարծես թէ այդքան էլ յստակ չհասկացաւ, կամ չփորձեց հասկանալ, թէ «առակը զինչ կը ցուցանէ»: Եւ նոյնիսկ փորձ չարուեստ հասկանալ, թէ ով է ցուցանողը, այսինքն ով է առակագիրը: Մինչդեռ դա կարող է լինել քաղաքական

թեան կառուցներից մէկը: Այնպէս որ, Կարէն Կարապետեանը գուցէ վարչապետի համար յաջողել է ձեռք բերել Գեղլապի նպատակորտուեալ, բայց Սերժ Սարգսեանին այդուամենայնիւ չարժէ աչքաթող անել միւսը, այն, որ Կարէն Կարապետեանինը չէ, այլ հանրութեանը: Հարցման միւս հասցէատէքը կարող է լինել Ռոբերտ Քոչարեանը, եթէ իհարկէ նա չէ հարցման գաղափարախօսը: Որովհետեւ հաւանական է, որ նա լինի գաղափարախօսը, որպէսզի նոյն Սերժ Սարգսեանին ցոյց տայ, որ եթէ ընդդիմութիւնն էլ նրան մրցակից չկարողանայ հնարել, ապա ինքն ունի արդէն իսկ յօրինած առնուակն երեքը: Եթէ Ռոբերտ Քոչարեանն այդուամենայնիւ գաղափարախօսը չէ, ապա նա դառնում է հաւանական հասցէատիրոջ թեկնածու: Այսինքն նրան փորձում են նախանշել առնուակն երեք տարբերակ, որոնց խաղի մէջ դնելով

ՏՆՏԵՍԱԿԱՆ ԱՃԻ ՖԵՆՈՄԵՆԸ

Հայաստանի տնտեսական իրավիճակը վերլուծողները թերեւս համակարծիք են միայն մի հարցում: Հայաստանն աննորմալ երկիր է: Ու մինչ իշխանութիւններն անընդհատ յիմար-յիմար դատողութիւններ են անում Հայաստանի տնտեսական աննախադէպ աճի մասին, երկիրն աստիճանաբար գլորւում է անդունդը: Ամէն ինչ ժամ առ ժամ թանկանում է, ու սա արդէն ոչ թէ սովորական գործընթաց է, այլ կատարեալ խուճապ: Երկիրն անդունդ է գլորւում ճիշդ եւ ճիշդ ժայռից պոկուած քարաբեկորի պէս. սկզբում՝ դանդաղ ու հանդիսաւոր, յետոյ՝ աւելի ու աւելի արագ: Հիմա այդ արագացման փուլն է: Իսկ ինչո՞ւ է ամէն ինչ թանկանում: Որքան էլ տարօրինակ է, բայց թալանչիները ոհմակը խիստ որոշակի բացատրութիւն ունի. «ախպեր, խի չես ջոգե՞լ, որ ժողովրդի ձեռը փող կայ»: Այդպէս են ասում բոլորը. խանութպաններ

որով Եւրոպայում վիլլաներ են գնում՝ Ատլանտեան ովկիանոսի ափին: Նշանակո՞ւմ է սա արդեօք, որ «մարդկանց կենսամակարդակն աճում է» (ինչպէս մեկնաբանում են իշխանութիւններն ու նրանց կամակատարները): Չգիտեմ: Բայց Լենինգրադի բլոկադայի տարիներին շան մսի կիլոգրամը փոխանակում էր 5 գրամ ոսկու հետ, ու ունէ մէկի մտքով չէր անցնում դա գնահատել որպէս «ազգաբնակչութեան գնողունակութեան աճի անհրաժեշտ ապացոյց»: Բոլորը հասկանում էին, որ դա կործանման եզրին գտնուող համակարգի հոգեվարձն է, եւ այդպէս երկար շարունակուել չի կարող: Իսկ Հայաստանում իրավիճակն առայժմ նորմալ է: Ճիշդ է, ամէն օր ամէն ինչը թանկանում է, բայց՝ քիչ-քիչ: Նոյնիսկ օրեր են լինում, երբ ոչ մի բան չի թանկանում: Այսինքն՝ ընդվզելու պատճառ առայժմ չկայ: Կարեւորը՝ առայժմ ոչ մէկը սովից չի մեռ-

Այն, ինչ այսօր կատարւում է Հայաստանում, լրջագոյն ուսումնասիրութիւնների թեմա է: Իշխանութիւններն ի վերջոյ կարողացել են հասնել նրան, որ Հայաստանը դառնայ բնակութեան համար բացարձակապէս ոչ պիտանի երկիր

Բոլորովին նշանակութիւն չունի, թէ որքանով է իրական Գեղլապի հարցման տուեալը, համաձայն որի, ինչպէս յայտնի է, Սերժ Սարգսեանը նախագահի թեկնածուի վարկանիշով զիջում է Վարդան Օսկանեանին, Րաֆֆի Յովհաննիսեանին եւ Գագիկ Ծառուկեանին

գործընթացները հասկանալու տեսանկիւնից շատ կարեւոր հանգամանք: Խնդիրն այն է, որ Գեղլապի հարցումն ակնյայտ ի ցոյց է դնում ներհիշխանական որոշակի հակասութիւնը, կամ այդ հակասութեան խիստ որոշակի ներուժը: Բոլորովին նշանակութիւն չունի, թէ որքանով է իրական Գեղլապի հարցման տուեալը, համաձայն որի, ինչպէս յայտնի է, Սերժ Սարգսեանը նախագահի թեկնածուի վարկանիշով զիջում է Վարդան Օսկանեանին, Րաֆֆի Յովհաննիսեանին եւ Գագիկ Ծառուկեանին: Օրինակ, ՀՀԿ խմբակցութեան դեկավար Կարէն Կարապետեանը յայտարարեց, թէ ունի Գեղլապի իր տուեալը, ըստ որի ամենից բարձր վարկանիշը հենց Սերժ Սարգսեանինն է: Խնդիրն այն է, որ Կարէն Կարապետեանի այդ տուեալը դեռ հանրութեան սեփականութիւնը չի դարձել, իսկ այն միւսը, որ Սերժ Սարգսեանը նոյնիսկ չկայ առաջատար եռեակի մէջ, դարձել է հանրային սեփականութիւն, եւ Գեղլապը չի հերքել այդ տուեալը: Հետեւաբար բոլոր նրանք, ովքեր փորձում են քաղաքական գործընթացում լինել ոչ թէ դիտորդ, այլ գործնական մասնակից, պէտք է փորձեն հասկանալ հրապարակուած հարցման ուղղուածութիւնը: Այդ իսկ պատճառով անհրաժեշտ է դիտարկել դրա հնարաւոր հասցէատէքերին: Նախ, առաջինը կարող է լինել հենց ինքը Սերժ Սարգսեանը, որին ինչ որ կերպ փորձում են հասկանալ, թէ ամենեւին պէտք չէ ինքզինքը համարել նախագահի անայլընտրանք թեկնածու եւ հաշուի չառնել «չըջապատող չորեքշաբթի», ինչպէս լրջակալ միջավայր արտայայտութիւնը տարիներ առաջ ռուսերենից թարգմանել էր Հայաստանի կառավարու-

կարող է Սերժ Սարգսեանի աներկբայ յաղթանակը դարձնել պայքարի առարկայ, այսինքն թոյլ չտալ, որ վարչապետը նախագահ դառնայ առանց որեւէ պատասխանատուութիւն ստանձնելու: Այսինքն պայմաններ թելադրել նրա նախագահութեան համար: Ինչու է դա անհրաժեշտ: Դա անհրաժեշտ է, որպէսզի Հայաստանի յաջորդ նախագահը չընտրուի առանց որեւէ պարտաւորութեան: Եթէ դա չի կարողանում անել ընդդիմութիւնը, այսինքն ինչ որ բան պարտաւորեցնել Սերժ Սարգսեանին, ապա դա պարտաւոր է անել Ռոբերտ Քոչարեանը, որովհետեւ ինքն էլ որպէս նախագահ ունեցել է եւ դեռեւս ունի որոշակի պարտաւորութիւններ՝ հասարակութեան եւ միջազգային հանրութիւն կոչուածի առաջ: Գեղլապի հարցման միւս հասցէատէքը կարող է լինել հենց հասարակութիւնը: Հասարակութիւնն իրաւունք չունի մտածել, որ երկրում, ընդ որում ցանկացած երկրում, կարող է լինել մէկը, որը այլընտրանք չունի: Դա չի վերաբերում միայն նախագահի ընտրութեանը, թէեւ տուեալ դէպքում խօսքն այդ մասին է: Հասարակութիւնը որեւէ հարցում, կենցաղային եւ պետական, պէտք է տեսնի այլընտրանք, այլընտրանքներ: Եթէ չի տեսնում, ուրեմն ոչ թէ կոյր է, այլ ընդհանրապէս մեռած: Ի տարբերութիւն մարդկային օրգանիզմի, հասարակական օրգանիզմի սիրտը դա աչքն է: Եթէ հասարակութիւնը տեսնում է, ուրեմն կայ, եթէ չի տեսնում, ապա հասարակութիւն լինելու մասին խօսակցութիւնները խիստ չափազանցուած են:

ՅԱԿՈՒ ԲԱԿԱԼԵԱՆ «ԼՐԱԳԻՐ»

նում: Եթէ մեռնեն էլ, վնաս չկայ: Սա էլ հո Լենինգրադի բլոկադան չի: Ում դուրը չի գալիս՝ թող հեռանայ Հայաստանից ու փող ուղարկի: Որպէսզի յաջորդ ամիս էլ կարողանան ասել՝ «խի չէք ջոգե՞լ, որ ժողովրդի ձեռը փող կայ»:

ԳՐԻԳՈՐ ՈՍԿԱՆԵԱՆ «ՉՈՐՐՈՐԴ ԻՇԽԱՆՈՒԹԻՒՆ»

ՄԱՍԻՍ ՇԱՐԱԹ-ՍԵՄԵՐԹ
ՊԱՇՏՕՆԱԹԵՐԹ՝
ՍՈՑԻԱԼ ԴԵՄՈԿՐԱՏ ԶՆՁԱԿԵԱՆ
ԿՈՒՍԱԿՑՈՒԹԵԱՆ
Արեւմտեան Ամերիկայի Ծրագրի

ԽՄԲԱԳԻՐ՝
ՏՕՔԹ ԱՐՇԱԿ ՊԵՏԵՆԵԱՆ
ԽՄԲԱԳՐԱԿԱՆ ԿԱԶՄ
ՍԱՅԱԿ ԹՈՒԹԵԱՆ
ՎԱԶԳԵՆ ԽՈՍԱՆԵԱՆ
ՅԱՐՈՒԹ ՏԵՐ ՂԱԻԹԵԱՆ

Գեղ. (626) 797-7680
Ֆաքս. (626) 797- 6863
E-Mail: massis2@earthlink.net
http://www.massisweekly.com

MASSIS Weekly
Organ of the Armenian Social
Democratic Hunchakian Party of
Western USA
1060 N. Allen Ave.
Pasadena, CA 91104
Phone: (626) 797-7680
Fax: (626) 797-6863
(USPS 667-310) (ISSN 0744-334X)
Published Weekly
Except Two Weeks in August

ANNUAL SUBSCRIPTION RATES:
USA \$50.00, Canada \$60 (Second
Class), \$75.00 (Air Mail)
Overseas \$85.00 (2nd Class Mail),
\$125.00 (Air Mail).
All payments must be made in
US funds & Drawn on US banks.
Periodicals Postage Paid
at Pasadena CA.
Please Send Address Change To
MASSIS WEEKLY
1060 N. Allen Ave.
Pasadena, CA 91104

ԼՈՒՐԵՐ

Ռ. ՔՈՉԱՐԵԱՆԻ ԵՒ Ս. ՍԱՐԳՍԵԱՆԻ ՆԵՐԿԱՅՈՒԹԻՒՆԸ ՑԱՆԿԱԼԻ Է

ԵՐԵՒԱՆ, «ԱՅԲ-ՖԷ»: «Ազգային Միաբանությունը կուսակցություն» նախագահությունը Սեպտեմբեր 7-ին տարածած հարցազրույցում վերահաստատել է Արտաշես Գեղամեանի այն մտայնությունը, որով առաջարկում է ընդդիմադիր քաղաքական կուսակցությունների հանդիպումներին մասնակից դարձնել նաև Ռոբերտ Քոչարեանին եւ Սերժ Սարգսյանին: Աւելին, ԱՄ-ն նպատակադրված է գտնում ընդլայնել նման հանդիպումների շրջանակը՝ ընդգրկելով թէ՛ իշխանական, թէ՛ ընդդիմադիր այլ կուսակցությունների առաջնորդներին:



Ազգային Միաբանության կուսակցության նախագահ Արտաշես Գեղամեան

«Մենք չույս ենք չափում, որ ՀՀ նախագահի բոլոր թեկնածուները, առաջնորդներով հայոց պետականության ամրապնդման ապահովման հրատապ դարձած գերինդերի լուծման առաջնահերթությունում, նախընտրական շրջանում հանդէս կը գան համատեղ յայտարարություններ՝ Լեւոնային Ղաբաբադի հիմնահարցի խաղաղ կարգաւորման սկզբունքների շուրջ միասնական դիրքորոշման մասին, - ասում է կուսակցության յայտարարության մէջ. - Վերլուծելով Հարաւային Կովկասի զարգացումներով շահագրգիռ երկրների դեկավարների կողմից վերջին շրջանում արուած յայտարարությունները, ինչպէս նաև ուժի միջազգային կենտրոնների որդեգրած մտայնությունները, արձանագրենք. դրանք չլի են տարածաշրջանային խիստ վտանգաւոր զարգացումներով: Այդ պարագայում մենք չենք բացառում վերջիններիս հնարա-

ւոր փորձերը, ինդրոյ առարկայի կապակցութեամբ՝ ներազդելու ՀՀ նախագահի թեկնածուների վրայ»:

«Ազգային Միաբանությունը կուսակցություն» այսուհետ էլ աջակցելու է երկրի ճակատագրով մտահոգ բոլոր ուժերի պարբերական հանդիպումների կազմակերպմանը:

«Հայոց պետականության համար ստեղծուած այս տագնապաշրջանը իրավիճակում ցանկացած դրսեւորում եւ գործողութիւններ, որոնք միտուած կը լինեն պառակտելու մասնատելու հասարակութիւնը, ժողովրդին, ում կողմից էլ դրանք հրահրուեն, խստորեն դատապարտուելու են «Ազգային Միաբանութիւն կուսակցութեան» կողմից», - եզրափակում են յայտարարութեան հեղինակները:

ԾԱՌՈՒԿԵԱՆԸ ՎԱԽԵՆՈՒՄ Է՝ ԻՐԵՆ ՆԵՂԱՑՆԵՆ

ԵՐԵՒԱՆ, «ԱՅԲ-ՖԷ»: Ովքեր կ'առաջադրուեն ՀՀ նախագահի պաշտօնում, առաջիկա յայտնի է. բաց յայտնի դարձաւ առաջադրուելու ցանկութիւնը չունեցող մէկի անունը՝ Գագիկ Ծառուկեան:



«Բարգաւաճ Հայաստան» կուսակցութեան նախագահ Գագիկ Ծառուկեան

«Ես նորից եմ ասում Ծառուկեանին ինչ ասում է, իր խօսքերին տէր է, ու ամենակարեւորը, որ ես ասել եմ, ինձ պաշտօն պէտք չի, ես սիրում եմ ու լիարժէք կատարում եմ իմ աշխատանքը, իմ ասածները լիարժէք ուժի մէջ են ու ամենակարեւորը, որ պաշտօնը միայն աթոռ է, այլ հիմնականում պաշտօնն այն է, որ մարդն իր կատարած աշխատանքում վայելի ժողովրդի սէրն ու յարգանքը», - Սեպտեմբեր 11-ին յայտարարեց «Բարգաւաճ Հայաստան» կուսակցութեան նախագահը:

ԲՀԿ-ն, որպէս կոալիցիայի անդամ, համաձայնագիր է ստորագրել ՀՀԿ-ի հետ՝ պաշտպանել միասնական թեկնածուի: Բայց հնարաւոր է, որ Գագիկ Ծառուկեանը պաշտպանի Լեւոն Տէր-Պետրոսեանին կամ չպաշտպանի Սերժ Սարգսյանին: «Մէկ-մէկ այնպիսի հարցեր էք տալիս, որ մարդ իրեն վատ է գտնում. Ծառուկեանին իր պարտ է կենսաբան ոչ մարդ է խաբել, ոչ մարդ է քցել, ոչ խօսք է ասել ու չի կատարել, ու այսօր տուեալ թեմայով խօսելն ակելորդ է, որովհետեւ Ծառուկեանը յուշագիր է ստորագրել, պարտաւորութիւն է վերցրել, ուրեմն լիարժէք իր աշխատանքը իր պարտաւոր-

րութիւնը անելու է: Ես իրականում իմ խօսքը պահող մարդ եմ: Ես ինձ այդ յուշագրով ոչ թէ կաշկանդուած, այլ պարտաւորուած եմ գտնում», - պատասխանեց նա:

Ռոբերտ Քոչարեանի ապագայի մասին Ծառուկեանն առաջիկա պատկերացում չունի, կարծում է, որ նա յոգնած կը լինի, բայց նաև համոզուած է, որ նրա փորձը մեր երկրին շատ օգտակար կը լինի. «Ինքը շատ պատրաստուած է, շատ մեծ փորձ ունի եւ իր աշխատանքը պէտք է մեր երկրին, մեր ժողովրդին»:

Գագիկ Ծառուկեանը պատասխանելով հարցին, թէ ինչից է վախենում, որ մեծ թիկնազօրով է շրջում, կէսակատակ ասաց. «Ես շատ թոյլ տղայ եմ, վախենում եմ փողոցում նեղանքներ», ապա ակելացրեց. «Ես 25 հազար աշխատող ունեմ, ամէն մէկը մի հարցով դիմում է»:

ԼՈՒՈՒ ՍԱՐԶԻ ԴԱՏԱԽԱԶԻ ՍՊԱՆՈՒԹԵԱՆ ԳՈՐԾԻ ՔՆՆՈՒԹԻՒՆԸ ՎԱՊԻՈՒՄ Է ԽՈՇՏԱՆԳՈՒՄՆԵՐԻ ԴԵՏ

ՏՆՏԵՍԱԿԱՆ ԱԶԱՏՈՒԹԻՒՆՆԵՐԻ ՑՈՒՑԻՉՈՎ ՐԱՅԱՍՏԱՆԸ 32-ՐԴՆ Է ԱՇԽԱՐՀՈՒՄ

«ԱԶԱՏՈՒԹԻՒՆ ՌԱՏԻՈՅ»: Լոյս է տեսել Տնտեսական ազատութիւնների 2007 թուականի հետազօտութիւնը, եւ այս անգամ էլ Հայաստանը յայտնուել է բաւական ընդարձակ տնտեսական ազատութիւնների աստիճան ունեցող երկրների թւում: Հայաստանը 32-րդ տեղն է գրաւեցրել՝ առաջ անցնելով այնպիսի երկրներից, ինչպիսին են Ֆրանսիան, Բելգիան եւ Իտալիան, ինչպէս նաև իր անմիջական հարեւաններից՝ Վրաստանից, Ատրպէյճանից եւ Թուրքիայից:

Եւ աշխարհի 71 այլ ինստիտուտներ, որոնք մտել են, այսպէս կոչուած, «տնտեսական ազատութեան ցանցի» մէջ:

Հետազօտութիւնը հիմնուած է 2005 թուականի վիճակագրութեան վրայ, թէեւ անցկացուել է 2007 թուականին:

Հեղինակները գտնուած են, որ տնտեսական ազատութիւնը ոչ մի դէպքում չպէտք է շփոթել ժողովրդավարութեան առկայութեան հետ: Օրինակ՝ Ֆրանսիան եւ Բելգիան ակելի վատ ցուցանիշներ ունեն տնտեսական ազատութիւնների բնագաւառում, քան Հայաստանն ու Ղազախստանը, սակայն շատ ակելի ազատ եւ բարեկեցիկ երկրներ են:

Բանն այն է, որ Ֆրանսիայի եւ Բելգիայի կառավարութիւնները շատ ակտիվ սոցիալական քաղաքականութիւն են վարում՝ բարձր հարկեր սահմանելով խոշոր կորպորացիաների եւ գործարարների նկատմամբ՝ հասարակութեան առաւել աղքատ խաւերին նպաստներ եւ բժշկական ապահովագրութիւն տրամադրելու նպատակով: Սա արդէն համարում է տնտեսական ազատութեան սահմանափակում եւ համապատասխան ցուցանիշի իջեցում:

«ԱԶԱՏՈՒԹԻՒՆ ՌԱՏԻՈՅ»: Կիրակի, Սեպտեմբեր 9-ին Վանաձոր այցելած Հայաստանի հելսինքեան ընկերակցութեան նախագահ Միքայէլ Դանիէլեանը երկուշաբթի օրը եւս մէկ անգամ մանրամասն անդրադարձաւ Վանաձորի քաղաքապետի ձերբակալուած եղբօրորդուն պատկանող ռեստորանի աշխատակիցների խոշտանգումների դէպքերին:



Խոշտանգումներու ենթարկուած երիտասարդներէն մին ցոյց կու տայ իր ստացած վէրքերը

Միքայէլ Դանիէլեանը ասաց նաև, որ խոշտանգուածները պատրաստ են իրենց միջնորդութեամբ համապատասխան բողոք ներկայացնել իրաւապահ մարմիններին:

Գլխաւոր դատախազութեան խօսնակը, իշխեցնենք, ասել էր, որ գրաւոր բողոք որեւէ մէկը չի ներկայացրել:

Անցած շաբաթավերջին ձերբակալուել էր Վանաձորի քաղաքապետ Սամուէլ Դարբինեանի եղբօրորդին՝ Արման Դարբինեանը: Հայաստանի գլխաւոր դատախազութեան խօսնակ Սոնա Տուզեանը ժխտել էր, թէ ձերբակալութիւնն առնչուած է Լոուր մարզի դատախազ Ալբերտ Ղազարեանի սպանութեան գործին: Դարբինեանը կասկածուած է ապօրինի ռազմամթերք պահելու մէջ. իրաւապահները նրա մեքենայում փամփուշտներ են յայտնաբերել:

Դանիէլեանը պնդեց, որ Արման Դարբինեանին պատկանող ռեստորանի աշխատակիցներին, որոնց բերման էին ենթարկել, խոշտանգել էին՝ փորձելով ստիպել, որ ցուցմունք տան Դարբինեանի մեղաւոր լինելու վերաբերեալ:

«Ես գրուցել եմ մատուցող Ներսիսեան Արմանի հետ, որ 25 տարեկան է եւ արտի արատ ունի, որին ծեծել են դատախազութիւնում», - յայտարարեց Դանիէլեանը: - «Երկու անգամ էին նրան կանչել:

Հայաստանը բացարձակ առաջատարն է Հարաւային Կովկասի տարածաշրջանում, իսկ ԱՊՀ-ի տարածքում Ղազախստանի հետ նոյն միաւորներով կիսում է առաջատարի դիրքերը:

Նախկին խորհրդային հանրապետութիւններից ամենաազատ տնտեսութիւնը ունի Էստոնիան, որը գրաւել է 8-րդ տեղը: Ռուսաստանը 112-րդ տեղում է:

Տնտեսական ազատութիւնների հետազօտութիւնը անցկացուել է ամերիկացի տնտեսագէտ, պրոֆեսոր Զէյնա Գորդնիի եւ Ռոբերտ Լոուսոնի կողմից: Հետազօտութեանը մասնակցել են «Ֆրէզդը» ինստիտուտը

ՍԵՐՃ ՍԱՐԳՍԵԱՆԸ ՐԱՆԴԱՐՏ Է ՎԵՐԱԲԵՐՈՒՄ

Սերժ Սարգսյանը հանդարտ վերաբերում է իր եւ Տէր-Պետրոսեանի առաջադրման հնարաւորութեանը. «Ես հանդարտ եմ վերաբերում բոլոր այն կանխատեսումներին, որ հնարաւոր է իմ թեկնածուութիւնը առաջադրեմ, կամ ՀՀԿ-

ն կ'առաջադրի իմ թեկնածուութիւնը: Բայց կարծում եմ դեռեւս վաղ է այս թեմայով խօսելը: Իսկ մենք որեւէ փոփոխութիւն մեր մարտավարութեան մէջ՝ կախուած

ԼՈՒՐԵՐ

ԻՎՆ ԼԵՍՈՐ. «ՑԵՂԱՍՊԱՆՈՒԹԵԱՆ ԲԱՆԱԶԵԻՐ ԿՐ ՎՆԱՍԻ ԱՄՆ-Ի ԵՒ ԹՈՒՐԲԻԱՅԻ ՅԱՐԱԲԵՐՈՒԹԻՒՆՆԵՐԻՆ»

«ԱԶԱՏՈՒԹԻՒՆ ՌԱՏԻՕ»: Ցեղասպանութիւնը ճանաչող բանաձեւի ընդունումը ամերիկեան Գոնկրէսում կը վնասի ԱՄՆ-ի եւ Թուրքիայի յարաբերութիւնները: Նման կարծիք է յայտնել ԱՄՆ-ի Գերման Մարշալի հիմնադրամի աւագ մասնագէտ Իան Լեսորը: «Թէեւ բանաձեւը խորհրդանշական բնույթի է, Թուրքիայի հասարակական կարծիքը շատ կոշտ կ'արձագանքի դրան: Բայց երկու կողմերն էլ պէտք փորձեն հնարաւորինս մեղմացնել իրենց արձագանքը», - ասել է դոկտոր Լեսորը, որը համահեղինակն է հրապարակուած «Անդրատլանտեան միտումներ-2007» սոցիոլոգիական հետազոտութեան:

«Թուրքի Տէյլի Ինիւզ» թերթում Լեսորը փաստում է, որ թուրքերը վատ են վերաբերում ԱՄՆ-ին: «Մենք հարցնում էինք թուրքերին՝ արդեօք նրանք լաւատես են, որ ԱՄՆում նախագահական ընտրութիւններից յետոյ երկու երկրների յարաբերութիւնները կը բարելաւուեն: Եւ պատասխանն էր՝ «ոչ»:

Մարշալի հիմնադրամի հարցումը ցոյց է տուել նաեւ, որ «թէեւ եւրոպացիների մեծամասնութիւնը չի ցանկանում, որպէսզի Թուրքիան մտնի Եւրամիութիւն, նրանց մեծ մասը գտնում է, որ Թուրքիայի անդամակցութիւնը անխուսափելի է»:

ԴԱՏԱՐԱՆԸ ՈՐՈՇԵՑ ՎԵՐՍՏԻՆ ԿԱԼԱՆԵԼ «ՌՈՅԱԼ ԱՐՄԵՆԻԱ»-Ի ՍԵՓԱԿԱՆԱՏԻՐՈՋ

«ԱԶԱՏՈՒԹԻՒՆ ՌԱՏԻՕՅ»: Վերաքննիչ դատարանը Սեպտեմբերի 11-ին մօտ 5 ժամ քննարկումներից յետոյ որոշեց մինչեւ Սեպտեմբերի 19-ը յետաձգել «Ռոյալ Արմենիա» ընկերութեան նկատմամբ առաջին ատենախնդարի անցած ամռանը կայացրած վճիռը վիճարկող միջոցառումների քննութիւնը՝ միաժամանակ որոշելով կալանել ընկերութեան սեփականատէր Գագիկ Յակոբեանին, ով գրեթէ երկու տարի կալանքի տակ գտնուելուց յետոյ ազատ էր արձակուել: Քանի որ Յակոբեանը այժմ Հայաստանում չէ՝ բուժուում է Իսպանիայում, դատարանը յանձնարարեց Ազգային Անվտանգութեան Ծառայութեանը յայտնաբերել եւ կալանել նրան: Յակոբեանը եւ նրա տեղակալ Արամ Ղազարեանը ձերբակալուել էին 2005 թուականի Հոկտեմբերին, երբ հրապարակայնօրէն Հայաստանի մաքսային ծառայութեանը մեղադրեցին կոռուպցիայի մէջ:

«Ազատութիւն» ռադիոկայանի հետ հարցազրոյցում Յակոբեանը, ով այժմ բուժուում է Իսպանիայում, ասաց. - «Ես անպայման վերադառնալու եմ... Հարցը բաւականին լուրջ է՝ կատարել վերահստութիւն սրտի, թէ ոչ: Սա է միակ պատճառը, որ մինչ այժմ ես չեմ վերադարձել Հայաստան»:

«Ինչ վերաբերում է դատարանի որոշմանը, որ որոշել են ինձ կալանել, ես ցաւում եմ... Անկախ նրանից, թէ նրանք ինչ որոշում են կայացրել, դա ոչ մի կերպ անդրադառնալու», - «Ազատութիւն» ռադիոկայանի հետ հարցազրոյցում ասաց նա՝ յաւելելով. - «Զկայ ոչ մի փաստաթուղթ, որ կը հիմնադրի մեր մեղքը»:

«Մեր յաղթանակը միեւնոջն ժամանակ կը բերի նրան, որ մնացած գործարարները կը տեսնեն, որ կարելի է պայքարել եւ կը պայքարեն նրանց դէմ... Ծատ-շատերն են ցանկանում, բայց ուղղակի բոլորն էլ վախենում են», - եզրափակեց Յակոբեանը:

ՎԱԽՃԱՆՈՒԵԼ Է ԸՆՅԱՍՏԱՆԻ ԸՄԲԸԱԿԱՆԻ ՍԱՐՁԻՉ ԻՎՆ ՊՈՐՏԵՐՖԻԼԴԸ

61 տարեկանում հաստ աղիքի քաղցկեղից մահացել է ֆուտբոլի Հայաստանի ազգային հաւաքականի մարզիչ Իան Պորտերֆիլդը: Ինչպէս Լոնդոնից հարորդում է «Ռոյթերզ» գործակալութիւնը, լուրը հաստատել են Անգլիայի Պրեմիեր լիգայի «Սանդերլենդ» ակումբից, որի հերոսն է համարուում Պորտերֆիլդը: 1 «Այսքան վաղաժամ մահը ողբերգութիւն է թէ՛ նրա ընտանիքի, թէ՛ ֆուտբոլի համար», - BBC-ին ասել է «Մանչեսթր Եւնայթեդ» ակումբի ղեկավար Ալեքս Ֆերգիսոնը: Ծոտլանդացի Իան Պորտերֆիլդը Հայաստանի ազգային հաւաքականի մարզիչ էր նշանակուել շուրջ մէկ տարի առաջ: Նրա գլխավորութեամբ Հայաստանի հաւաքականը սկսել էր յաջող ելույթներ ունենալ «Եւրօ - 2008»-ի ընտրական մրցաշարում, մասնաւորապէս, արտագնայ խաղում 2:1



Իան Պորտերֆիլդ

հաշուով յաղթանակ տանելով Ղազարխաստանի հաւաքականի նկատմամբ, Երեւանում՝ 1:0 հաշուով յաղթելով ընտրական մրցաշարի Ա. խմբի առաջատար Լեհաստանի հաւաքականին եւ ոչ-ոքի՝ 1:1 խաղով Պորտուգալիայի հաւաքականի հետ: 1988-93 թուականներին Իան Պորտերֆիլդը մարզել էր անգլիական «Չելսի»-ն:

ՀԱՅԱՍՏԱՆ ԴԵՍՈԿՐԱՏԱԿԱՆ ԱԿՈՒՄԲԵՆ ՆԵՐՍ

Մարումակուած էջ 1-էն 2000 թուականին, երբ վարչաւարի մէջ կայացաւ «Դեմոկրատական ակումբի» անդրանիկ հա-

ւաքը, Հայաստան մասնակցի կարգավիճակ ունէր: Սակայն 2002 եւ 2005 թուականներու հաւաքներուն Հայաստանի կարգավիճակը իջեցուած էր մինչեւ դիտորդ:

ՎԻՐԱՅԱՅՈՑ ԹԵՍԸ ԿԱՐԳԱՎԻՃԱԿ ԶՈՒՆԻ

ԶԱԻԱԽԲ-ԻՆՖՕ: «Հայ Առաքելական Եկեղեցու հետ կապուած Զաւախքում մենք ունենք երկու հիմնախնդիր. առաջնային հիմնախնդիրը թեմի կարգավիճակի հարցն է», - Զաւախք այցելութեան ժամանակ ասել է վերահայր թեմի առաջնորդ Տէր Վազգէն եպիսկոպոս Միրզախանեանը, պարզաբանելով, որ վրաստանում բոլոր կրօնական փոքրամասնութիւններն, իրենց իրաւունքներից ելնելով, գրանցուած չեն: Միւս հիմնախնդիրը, Տէր Վազգէն եպիսկոպոս Միրզախանեանի խօսքերով, Թբիլիսիի Սուրբ Նորաշէն եւ Ախալցխայի Սուրբ Նշան եկեղեցիների՝ Հայ Առաքելական Եկեղեցուն վերադարձնելու հարցն է. «Ոնդիրներ դեռեւս կան եկեղեցիների վերանորոգման, Թբիլիսիում, Ախալցխայում պատմական մեր եկեղեցիների վերադարձի, որ ժամանակի խնդիր է: Վստահաբար պիտի գայ օր, որ դրանք կ'ունենանք, բայց այս ընթացքում մենք գոհ ենք, որ կամաց, կամաց մեր ժողովրդի միջոցներով վերականգնոււմ են մեր եկեղեցիները, այսօր ունենք 25-ից ասել գործող եկեղեցիներ, որոնց հիմնական մասն

այստեղ Զաւախքում է»:

«Սակայն, նայելով այն նախադրեալները, որ այսօր կան Զաւախքում, եկեղեցիներ վերահայր թեմում գնալով աւելի բարօք վիճակի են գալիս: Գրեթէ ամէն տարի գոնէ մէկ, երկու եկեղեցի վերանորոգուում եւ վերածուում է: Նշանակուում են նորած քահանաներ թեմում ծառայութեան», - նշեց եպիսկոպոսը, յոյս յայտնելով, որ նոր, երիտասարդ քահանաներով Զաւախքի հոգեւոր կազմը համալրելու ծրագիրը շարունակական բնույթ է կրում, ինչին պէտք է օժանդակի Գարեգին Երկրորդ Ամենայն Հայոց Կաթողիկոսը եւ աջակցեն շրջանի ղեկավարութիւնն ու ժողովուրդը:

Յիշեցնենք, որ Յուլիսին երկու նորանշանակ քահանաներ սկսեցին գործել Զաւախքում. Տէր Արմաշ քահանայ Պողոսեանը Նինոծ-մինդայում, Տէր Մանուկ Զէյնալեանը՝ Ախալցխայում, իսկ Սեպտեմբերի մէկին Արակովա գիւղի Սուրբ Գէորգ եկեղեցում իր անդրանիկ պատարագը մատուցեց գիւղի նորանշանակ հոգեւոր հովիւ Տէր Թադէոս քահանայ Մկրտչեանը:

ԱԼԵՔՍԱՆԴՐ ԱՐՁՈՒՄԱՆԵԱՆ

Մարումակուած էջ 1-էն տարողները պարտաւոր են ներդրութիւն խնդրել իրմէ: Ըստ Արզումանեանի՝ այն շուտաւեւ եւ անհասկնալի իրավիճակը, որ առկայ էր Մայիսի 7-ին, երբ անհեթեթ մեղադրանքը ներկայացուեցաւ իրեն, կը շարունակէ մնալ նաեւ այսօր, քանի որ դեռ յայտնի չեն իր գործի պատուիրատուներն ու դրդապատճառները: Սակայն, ան կասկած չունի, որ իր ապօրինի կալանաւորումը գնահատական պիտի ստանայ: «Սա ակնյայտ քաղաքական պատուէր էր, քանի որ այն մարդը, որ ստորագրեց, թէ ինձ հարկաւոր է եւս 2 ամիս պահել կալանքի տակ, այդ նոյն մարդը կարճ ժամանակ անց գրեց, որ անհրաժեշտ է իմ խափանման միջոցը փոխել: Սա

ապացուցում է այն, որ քաղաքական տեսանկիւնից դա պատուէր էր, իսկ իրաւաբանականով՝ բեզպարիղէ», - ըսաւ Ալեքսանդր Արզումանեան: Ինչ կը վերաբերի մեկուսարանին ներս իր անցուցած օրերուն, ան վստահացուց որ, ոչ մէկ անյարգալից վերաբերմունք չէ եղած: Այդ ընթացքին միշտ ալ հետեւած է մամուլի հրապարակումներուն ու եկած է այն եզրակացութեան, որ «այս երկրում միակ գործ անողները լրագրողներն են»:

Արզումանեան աւելցուցած է որ, մեկուսարանը ապացուցեց, թէ ինք հեշտ կոտորուող չէ, «ունի անբասիր կենսագրութիւն եւ ըստ այդմ ոչ մէկից չի վախենում»:

Բանտէն դուրս գալէ ետք եւս ան պիտի շարունակէ քաղաքական իր գործունէութիւնը:

ԲԱԿՕ ՍԱՅԱԿԵԱՆԻ ԵՐԴՄԱՆ ԱՐԱՐՈՂՈՒԹԻՒՆ

Մարումակուած էջ 1-էն վրայ: Ան, ստանձնելով ԼՂՀ նախագահի պաշտօնը, երդում ըրաւ անբեկանելիօրէն կատարել Սահմանադրութեան պահանջը, յարգել մարդու եւ քաղաքացիներու իրաւունքներն ու ազատութիւնները, ապահովել երկրի անկախութիւնն ու ինքնիշխանութիւնը, տարածքային ամբողջութիւնն ու անվտանգութիւնը եւ ապահովել ժողովուրդի բարեկեցութիւնը: Ղարաբաղի նոր նախագահին իր օրհնութիւնը տուաւ Հայ Առաքելական Եկեղեցու Արցախի թեմի առաջնորդ Պարգեւ Սրբազանը: Բակօ Սահակեանի երդման արարողութեան մասնակցելու հա-

մար Ղարաբաղ ժամանեցին աւելի քան 100 հիւրեր՝ Միացեալ Նահանգներէն, Ռուսաստանի Դաշնութեանէն, Ֆրանսայէն, Ուկրաինայէն եւ այլն: Արարողութեան ներկայ եղան նաեւ Ռոբերթ Քոչարեան, Հայաստանի Արտաքին Գործոց նախարար Վարդան Օսկանեան, Պաշտպանութեան նախարար Միքայէլ Յարութիւնեան եւ շարք մը ՀՀ բարձրաստիճան պաշտօնեաներ, պատգամաւորներ, քաղաքական գործիչներ եւ մտաւորականներ: Լրագրողները կարելիութիւն չունեցան հետեւելու հանդիսութեան եւ բաւարարուեցան յարակից սրահի մը մէջ հաւաքուելով, ինթերնէթի միջոցաւ հետեւիլ իրադարձութեան:

ՍԵՐԺ ՍԱՐԳՍԵԱՆԸ ՀԱՆԴԱՐՏ Է ՎԵՐԱԲԵՐՈՒՄ

Մարումակուած էջ 3-էն թեկնածուների առատութիւնից կամ սակաւութիւնից, չենք մտցնելու. այդպէս վարուեցինք խորհրդարանական ընտրութիւնների ժամանակ, այդպէս ենք վարուելու նաեւ նախագահական ընտրութիւնների

ժամանակ», - Սեպտեմբեր 12-ին ասաց ՀՀ վարչապետը եւ աւելացրեց, որ իրենց կարեւորագոյն խնդիրն է ստանալ ժողովրդի եւ միջազգային կառույցների «առնուազն հաւասար գնահատականը մեր Նախագահի ընտրութիւններին»:

ՔՆՆԱՐԿՈՒՄ

ՀԱՐՑԱԶՐՈՅՑ

«ՇՈՊԵՒՐ ԱՌԱՋՆՈՐԴՐ ՊԵՏՔ Ե ԻՐ ՏԵՂՈՒՄ ԼԻՆԻ»

«ԼՂՀ նախագահի վերջին ընտրությունները եւս մէկ անգամ ապացուցեցին, որ Արցախն առաջ է ընթանում ժողովրդավարական ուղով: Մարդիկ ընտրութեան էին գնում սոճական տրամադրութեամբ, ծաղիկներով եւ դա այդպէս էր բոլոր շրջկենտրոններում, գիւղերում: Դա բացառիկ երեւոյթ էր», - «Ա1+»-ին յայտնեց Արցախի թեմի առաջնորդ Պարգեւ սրբազանը: Նրա կարծիքով՝ ժողովրդավարական սկզբունքներին ու չափանիշներին են համապատասխանել ԼՂՀ բոլոր ընտրութիւնները:

-Այս ընտրութիւնները եւս մէկ անգամ ապացուցեցին, որ ԼՂՀ-ն կապացած պետութիւն է եւ ԼՂ-ն անապացւան պէտք է դառնայ բանակցութիւնների անմիջական մասնակցից: Վճռում է Արցախի ճակատագիրը, եւ որեւէ մէկը չի կարող այն վճռել առանց ԼՂ-ի մասնակցութեան: Սա պարզ եւ անվիճելի տրամաբանութիւն է:

-Արցախցու համար այսօր ո՞րն է ԼՂ հիմնախնդրի լուծման ընդունելի տարբերակը: Հայկական կողմն ամենաբարձր մակարդակներով յայտարարում է, որ պատրաստ է փոխզուգումների, իսկ շարքային արցախցին ինչպէ՞ս է վերաբերում փոխզուգումներին:

-Փոխզիջումը ենթադրում է երկկողմանի զիջումներ: Հայկական կողմը պատրաստ է զիջումներ, սակայն Ատրպէյճանը պատրաստ չէ որեւէ փոխզիջման: Պատճառը դա է, որ բանակցութիւնները որեւէ կերպ առաջ չեն ընդունում:

-Փոխզիջում ասելով՝ արցախցին ընդունո՞ւմ է տարածքային զիջումներ:

-Իհարկէ, ոչ մի արցախցի եւ ընդհանրապէս հայ չի ուզում տարածք զիջել, սակայն սթափ տրամաբանութիւնը պահանջի, որ ինչ-որ բաներից պէտք է հրաժարուել՝ անկախութիւն, հաստատուն խաղաղութիւն, միջազգային ճանաչում ունենալ, ապա արցախցին միզուցէ եւ մտածի այդ մասին: Սակայն այսօր արցախցուն պարզ չէ, թէ ինչի համար պէտք է ինչ-որ բան զիջի եւ որքան զիջի: Երբ խօսում են փոխզիջումների մասին, ապա այն ենթադրում է երկկողմանի զիջումներ, եւ քանի դեռ Ատրպէյճանի որդեգրած քաղաքա-



կանութիւնը դա՛ արցախցին ինչո՞ւ պէտք է ինչ-որ բաներ զիջի: -Դուք ասում եք, որ արցախցին պատրաստ է մտածել փոխզուգումների մասին, եթէ Ատրպէյճանը համապատասխան կամք դրսեւորի: Սակայն որոշ արցախցիներ, այդ թուում բարձրաստիճան պաշտօնեաներ պնդում են, որ Արցախն իր խնդիրը լուծել է:

-Արցախի խնդիրը եւ լուծումը է եւ՛ ոչ: Մենք լուծել ենք մեր խնդիրը: Հերթը միջազգային հանրութեանն է: Մենք ապրում ենք եւ պիտի շարունակենք այսպէս ապրել: Եթէ Արցախն ունենայ միջազգային ճանաչում, կեանքն ԼՂՀ-ում աւելի արագ կը զարգանայ, ներդրումների հոսքը կտրուկ կ'աւելանայ:

-Որո՞նք են այսօր ԼՂՀ-ի առաջ ծառայած հիմնական խնդիրները:

-ԼՂՀ-ն այսօր ունի, թէ քաղաքական, թէ տնտեսական, թէ սոցիալական խնդիրներ: Ամենաուշանայինը Արցախի միջազգային ճանաչումն է եւ երկրորդը՝ տնտեսութեան զարգացումը, որը եւ կը նպաստի բնակչութեան աւելացմանը եւ նրանց կենսամակարդակի բարձրացմանը: Բարեբախտաբար, Արցախի պետական բիւջէն տարէցտարի աւելանում է: Եթէ այս տեմպերով շարունակուի, ապա Արցախը բաւականին լուրջ նուաճումներ կ'ունենայ:

-Որքան էլ նուաճումներն ակնյայտ են, սակայն փաստն այն է, որ

Շաբ.ք էջ 19

ԱՏՐՊԵՅՃԱՆՆ ԸՆԴԱՅՆՈՒՄ Ե ԻՐ ՈԱԶՄԱԿԱՆ ԿԱՐՈՂՈՒԹԻՒՆԸ ՈԱԶՄԱԿԱՆ ՈՒԺԻ ԿՈՒՏԱԿՈՒՄ ԿՈՎԱՍՈՒՄ

Պատերազմի եւ խաղաղութեան լուսաբանման ինստիտուտը (IWPR) պատրաստել է յատուկ թողարկում՝ Կովկասի ռազմականացման վերաբերեալ: Յօդուածները տպագրուել են IWPR-ի Կովկասեան լրատու պարբերականում

Պաքուի ռազմական ծախսերի ընդլայնմանը զուգահեռ կոչեր են հնչում՝ դուրս գալ Եւրոպայում սովորական սպառազինութիւնների համաձայնագրից:

Ատրպէյճանում Եւրոպայում սովորական սպառազինութիւնների համաձայնագրով նախատեսուած քվոտաների վերանայման կոչերն աւելի ու աւելի յաճախ են հնչում: Ատրպէյճանում կոչ են անում դուրս գալ համաձայնագրից:

Այս կոչերն աւելի յաճախակիացան այն բանից յետոյ, երբ Ռուսաստանը յայտարարեց, որ սառեցնում է իր մասնակցութիւնը համաձայնագրում, որով սահմանափակում է եւրոպական երկրների՝ իրենց տարածքում պահուող զինատեսակների քանակութիւնը:

Միեւնոյն ժամանակ որոշ վերլուծաբանների անհանգստացում է Ատրպէյճանի ռազմական բիւջէի աճը. նրանք ասում են, թէ վերջինս մեծացնում է Լեռնային Ղարաբաղի շուրջ պատերազմի վերսկսման հնարաւորութիւնը:

«ՆԱՏՕ-ն անհանգստացած է Լեռնային Ղարաբաղի հակամարտութեան գոտում զանգուածային ռազմականացմամբ», - Մարտին Ատրպէյճան կատարած այցից յետոյ յայտարարեց Հարաւային Կովկասում եւ Կենտրոնական Ասիայում ՆԱՏՕ-ի գլխաւոր քարտուղարի յատուկ ներկայացուցիչ Ռոբերտ Սիմոնսը: «Հայաստանը եւ Ատրպէյճանը զերազանցել են Եւրոպայում սովորական սպառազինութիւնների համաձայնագրով նախատեսուած զէնքի սահմանափակումները»:

Ատրպէյճանի ներսում Եւրոպայում սովորական սպառազինութիւնների համաձայնագրի լուծարման հնարաւորութիւնը լայնօրէն ողջունում է: «Նման քայլը դրական է Ատրպէյճանի համար. քանի որ մենք նախատեսում ենք աւելացնել մեր ռազմական կարողութիւնները, Ռուսաստանի դուրս գալը մեր ձեռքերն արձակում է», ասում

է քաղաքական փորձագէտ Իլգար Մամեդովը: «Հիմա կարելու է, որ մեր իշխանութիւնները զիջումների չգնան այն ուժերի հետ, որոնք կը փորձեն ստիպել մեզ ենթարկուել Եւրոպայում սովորական սպառազինութիւնների համաձայնագրի սահմանափակումներին»:

Ատրպէյճանում շատերն են դժգոհ համաձայնագրով Ատրպէյճանի համար նախատեսուած սահմանափակումներից, ասելով, թէ դրանք աւաւելութիւն են տալիս իր փոքր հարեւան եւ ախոյեան Հայաստանին:

Ատրպէյճանի ռազմական բիւջէի կտրուկ աւելացումը հնարաւոր է դարձել երկրի նաւթային հսկայական եկամուտների շնորհիւ: 2007 թրուականին ողջ ռազմական բիւջէն կազմել է 907 միլիոն մանաթ (մէկ միլիարդ ԱՄՆ դոլարից մի փոքր աւել): Ռազմական ծախսերն անցեալ տարուայ համեմատ աճել են 27,9 տոկոսով եւ այժմ կազմում են երկրի ամբողջ բիւջէի 16 տոկոսը:

Այս գումարից 796 միլիոն մանաթը նախատեսուած է պաշտպանութեան նախարարութեան, իսկ 110 միլիոնը՝ վերջերս կազմաւորուած պաշտպանական արդիւնաբերութեան նախարարութեան համար:

Պաքուի «Դոկտրին» ռազմական հետազոտութիւնների կենտրոնի համաձայն Ատրպէյճանում մէկ շնչին հասնող ռազմական ծախսերը, որոնք այս տարի կազմում են 105 ԱՄՆ դոլար, զգալիօրէն գերազանցում են Հայաստանի եւ Վրաստանի ծախսերը՝ որոնք համապատասխանաբար կազմում են 70 եւ 65 ԱՄՆ դոլար:

Ատրպէյճանի նախագահ Իլհամ Ալիեւը հեռուստատեսութեամբ նշել է, որ իր երկրի ռազմական բիւջէն այժմ ութ անգամ գերազանցում է չորս տարի առաջ ունեցածը եւ որ ռազմական ծախսերը առաջնային կարեւորութիւն ունեն պետական ծախսերի շարքում: «Պատճառն այն է, որ մենք պատերազմական դրութեան մէջ ենք, եւ մեր տարածքն օկուպացուած է», - ասել է նա: «Պատերազմը դեռ աւարտուած չէ: Կա ընդամէնը պահպանուող հրազարար»:

Շաբ.ք էջ 19

ATLANTIS
RESTAURANT AND NIGHT CLUB

FRIDAY NIGHTS AT ATLANTIS
ARABIAN NIGHTS

ENJOY A NIGHT OF MIDDLE EASTERN MUSIC, DANCING AND ENTERTAINMENT EVERY FRIDAY NIGHT AT ATLANTIS. ATLANTIS IS FULLY EQUIPPED WITH A REMARKABLE COCKTAIL BAR, HOOKAH BAR AND LIVE DJ.

EVERY FRIDAY, BE SURE TO WITNESS OUR LIVE BELLY DANCING SHOW FEATURING WORLD FAMOUS HELINA AND THE SAHLALAH DANCERS

- authentic cuisine
- full hookah bar
- VIP membership
- full cocktail bar
- live belly dancing
- live music and DJ

ATLANTIS
RESTAURANT AND NIGHT CLUB

626.449.4599
162 N. SIERRA MADRE BLVD.
PASADENA, CA 91107

ՔԱՂԱՔԱԿԱՆ

2001 ԹՈՒԱԿԱՆԻ ՍԵՊՏԵՄԲԵՐ 11-Ի ԱՂԵՏԸ

ՅԱՐՈՒԹԻՒՆ ՍԱՂԻՆԱՆ

Այս օրերուն յատկապէս Ամերիկայի մէջ, հանգամանօրէն եւ հանդիսաւորապէս կը նշուի 2001 թուականի Սեպտեմբեր 11-ի ահաւոր ահաբեկչական գործողութիւն, նիւ Եորքի գոյգ երկնաքեր շէնքերու վրայ: Սոյն ահաբեկչութեան վաղորդանիւն, հայրենասիրութեան եւ ազգային միասնականութեան հրաշալի տրամադրութիւն մը ստեղծուեցաւ ամերիկեան պետական եւ ժողովրդային շրջանակներու մօտ, տրամադրութիւն որ դժբախտաբար խանգարուեցաւ Իրաքեան պատերազմի եւ անոր առթած դժուարութեանց պատճառաւ:

ԻՆՉՊԷՍ ԿԸ ԲԱՅԱՏՐՈՒԻ ԱՅԴ ԱՀԱԲԵԿՉԱԿԱՆ ԱՔԹԸ

Առաջին օրերուն ամբողջ Ամերիկան եւ բազմաթիւ այլ երկիրներ շուարած, նոյնիսկ շշմած մնացին այնքան որ սարսափելի էր տեղի ունեցածը: Թէեւ ակնկալելի էր մասամբ մը, քանի որ, դէպքէն 6 տարիներ առաջ, նոյնաման արարք մը տեղի ունեցած էր նոյնինքն նիւ Եորքի մէջ, որ շատ աւելի նուազ մարդկային եւ նիւթական վնասներ հասցուց:

Հետապնդումներէն յայտնի եղաւ որ Ուսամա Պըն Լատրնի ղեկավարած «Ալ Գայիտա» կազմակերպութեան գործն էր այս արարքը, որ երկար ժամանակ լաւապէս ծրագրուած գործողութիւն մըն էր, որուն իրագործողներն էին մեծաւ մասամբ Սէուտցի երիտասարդներ:

Ահաբեկչական սոյն արարքէն ետք Պուշի իշխանութիւնը ահաբեկչութեան դէմ միջազգային պատերազմ մը յայտարարեց, պատերազմ, որուն ծիրէն ներս կ'իյնան ներկայիս մղուող պատերազմները, Աֆղանիստանի եւ Իրաքի մէջ: Թէեւ Պուշ եւ իր համախոհները այս արշաւանքներուն պատճառ կը գտնեն իրենց յայտարարած ահաբեկչութեան դէմ, մանաւանդ իսլամական, ծայրայեղ «ճիհատիստ» խմբաւորումներու նկատմամբ, շատ մը իրազեկ եւ քաղաքական դիտողներ կը բացատրեն թէ եղածը ոչ թէ ծայրայեղ փոքրամասնութեան մը դէմ պայքար մըն է, այլ խորքին մէջ երկու տարբեր քաղաքակրթութեանց միջեւ տեղի ունեցող պայքար մըն է, իր կրօնական,

քաղաքական, տնտեսական եւ մշակութային բարդ երկարաձգումներով:

Եթէ կրօնականը առնենք, անվարան կարելի է ըսել որ քրիստոնեայ-իսլամ կրօններու բախում մըն է անտարակոյս, որ մրցակցութեան ելած են իրարու դէմ:

Քաղաքականի պարագային աշխարհի վրայ երկու քաղաքակրթութեանց համար, ազդեցութեան գոտիներու հետապնդումն է, քրիստոնէութեան համար, քաղաքային իրաւունքներու եւ աշխարհաշինկայման ընդհանուր քողին տակ, որուն մէջ կ'իյնան անհատական ազատութեանց եւ ժողովրդավարական հասարակարգի ստեղծման սկզբունքները: Իսլամ «ին համար առաւելաբար պետութիւն-կրօն միութեան ստեղծումն է, իր կրօնական «շարիա» օրինադրով:

Տնտեսականի պարագային, Ուսամայի հետեւորդները, առաւելաբար Արեւմուտքին եւ մասնաւորաբար Ամերիկային, կը քննադատեն իրենց երկիրներու բնական հարստութիւններու, յատկապէս քարիւղային եւ աշխարհագրական, օգտագործումը իրենց տնտեսական նեղմիտ շահերուն համար, շահեր որոնք իրերայաջորդ ամերիկեան իշխանութիւնները հետապնդած են արաբական երկիրներու, ըստ իսլամական մտածողութեան, ոչ-ժողովրդական իշխանութեանց մօտ: Քարիւղի եւ նաւահանգիստներու, ինչպէս նաեւ այլ «ըտուրներ» ու շահագործումը Արեւմուտքին կողմէ, իսլամ շրջանակներու համար, ընդունելի երեւոյթ մը չի նկատուի այլեւս:

Ինչ կը վերաբերի մշակութային հարցին, Ամերիկա եւ Արեւմուտքը կ'ուզեն իսլամական աշխարհին «պարտադրել» իրենց քաղաքակրթական համոզումները, որոնք խոտոր կը համեմատին իսլամական ըմբռումներուն հետ:

ԻՆՉ ԿԸ ԾՆԻ ԱՅՍ ԲՈՂՈՐԷՆ

Նկատի առած այս բոլոր զարգացումները, իսլամական աշխարհի ծայրայեղ տարրերը, ոչ միայն Ուսամայի, այլ ընդհանրապէս լայն ժողովրդային զանգուածներու համար, մերժումի եւ ըմբոստութեան տրամադրութիւն մը կը զարգանայ, ոչ միայն արեւմտեան քաղաքակրթութեան, այլ յատկապէս իրենց պատկանած երկիրներու ղեկավարութեանց դէմ, որոնք կը



գործակցին, կամ ենթակաշ կը մնան արեւմտեան մտածողութեան: Արդիւնքը կ'ըլլայ այն որ ներկայիս կը տեսնուի համաշխարհային գետնի վրայ, Միջին Արեւելքէն մինչեւ Եւրոպա, մինչեւ Ասիա: Ինտոնեգիայի, Ֆիլիպին կղզիներ, Փաքիստանի եւ իսլամական այլ երկիրներու, ինչպէս նաեւ Եւրոպայի մէջ տեղի ունեցող իրադարձութիւնները, ընհանրապէս ահաբեկչական գործողութիւններով յատկանշուած, կրօնական գոնաւորում ունին, եւ կը դրսեւորեն ակնարկուած, իրարու հակադրուող, քաղաքակրթութեանց ենթահողերը:

Այս պայմաններու տակ, գէթ ներկայիս, դժուար, չըսելու համար, անկարելի կը թուի Քրիստոնեայ-իսլամ հակառակութեան, նաեւ աւելցնենք քրիստոնեայ-հրեայ-իսլամ հակառակութեան մեղմացումն ու խաղաղ գոյակցութիւնը:

Այս օրերուն Ուաշինկթըն կը գտնուին իրաքեան ամերիկեան զօրքերու հրամանատար, Զօրավար Փեթրաուս եւ ամերիկեան դեսպան Ռայըն Քրոքըր: Ուաշինկթըն կը գտնուին Գոնկրէսի երկու տուններուն զեկուցում տալու իրաքեան կացութեան մասին, զեկուցում որու պիտի հետեւի քանի մը օրեր ետք, նախագահ Պուշի ելոյթը ամերիկեան ժողովուրդին: Դժբախտաւ-

թիւնը ներկայիս այն է որ թէ իշխանութեան եւ թէ ժողովրդային շրջանակներու մօտ լուրջ տարակարծութիւն կայ իրաքեան պատերազմի նկատմամբ: Թէեւ այս երկու անձնաւորութիւնները, զինուորական եւ քաղաքական կը պնդեն թէ իրենց տեսակէտները սոսկ իրենց մտածումներն են, յատկապէս տեմոքրատ կուսակցութեան ղեկավարները, համոզուած են որ այդ երկուքը կ'արտայայտեն Սպիտակ Տան եւ Փենթագոնի տեսակէտները: Որոշ չափով լաւատես այդ արժեւորումները, թէ քաղաքական եւ թէ զինուորական մարզերէն ներս տեմոքրատներու կողմէ չափազանցուած եւ ոչ-իրական կիր նկատուին, պարզապէս պատերազմի շարունակութիւնը եւ հաւանական յաղթանակի մը գրեթէ անկարելի երազով:

Ամէն պարագայի, ինչ որ ըլլան պատերազմական զարգացումները, այնքան ատեն որ Իրաքի մէջ քաղաքական համաձայնութիւն տակաւին չկայ շիիներու, սիւնիներու եւ քիւրտներու միջեւ, զինուորական փոքր եւ մեծ ձեռքբերումները ի վիճակի չեն Իրաքի մէջ խաղաղութիւն հաստատելու: Ըստ երեւոյթին, ամերիկեան զօրքերը տակաւին երկար ատեն պիտի մնան Իրաքի մէջ, եւ հին ուր պատերազմական խարիսխներ գոյութիւն ունին:

Ձեր Ծանուցումները Վստահեցէք «Մասիս» Շաբաթաթերթին T: (626) 797-7680 F: (626) 797-6863 Email: massis2@earthlink.net

ABA INSURANCE SERVICES logo and 33th Anniversary banner. Text includes: Life, Health, Group Health, Disability, Long Term Care, Blue Cross of California, Blue Shield of California, 1975-2008, 33th ANNIVERSARY.

ԱՊԱՌՈՎԱԳՐՈՒԹԻՒՆԸ ԱՆՌԱԺԵՇՏ Է

ԵՐՔԵՔ ՈՒՇ ԶԷ ՎԵՐԱՔՆՆԵԼՈՒ ՁԵՐ ԱՊԱՌՈՎԱԳՐՈՒԹԻՒՆՆԵՐԸ

ՊԵՏՐՈՍ ՄԱՐՈՆԵԱՆ

818 500-9585 ABA INSURANCE SERVICES 805 E. Broadway . Glendale, CA 91205

E-mail: BMaronian@AOL.com ONE EIGHT HUNDRED FOUR "HAI- TAD"



ՓԱՂՈՒԹԱՅԻՆ

Ս. ԳՐԻԳՈՐ ԼՈՒՍԱԼՈՐԻՉ ԵԿԵՂԵՑԻՈՅ ԴՌՆԲԱՑԵՔԻ (ՆԱԲԱԿԱՏԻՔ) ԱՐԱՐՈՂՈՒԹԻՒՆ

Անցնող շաբաթավերջին՝ Սեպտեմբեր 8 եւ 9 օրերը Փասատինայի եւ շրջակայքի հայութեան համար եղան պատմական յիշատակելի անախրնթաց օրեր: Արդարեւ իրականութիւն դարձած էր տասնամակէ մը ի վեր շինարարութեան մէջ եղող հայկական ճարտարապետական ոճով կառուցուած Ս. Գրիգոր Լուսաւորիչի անունը կրող Հայաստանեայց Առաքելական Հոյակերտ եկեղեցին: Ան կը գտնուի քաղաքի կեդրոնը գտնուող Գօրջառասօ պողոտային վրայ:

Երկօրեայ տօնախմբութեանց սկիզբը նաւակատիքն էր, որ տեղի ունեցաւ Շաբաթ Սեպտեմբերի 8ին, «Դռնբացէք» ի արարողութեամբ: Տօնականօրէն զարդարուած եկեղեցւոյ մուտքին հայկական զարդաքանդակներով պատրաստուած փակ դրան առջեւ, յատուկ արարողութեան նախագահեց թեմիս առաջնորդ Գերշ. Տ. Յովնան Արք. Տէրտէրեան, իր շուրջ ունենալով տասնեակ մը եկեղեցականներ եւ դպրաց դասը: Այնուհետեւ, դուռը բացուելով հոգեւորականներն ու բազմահարիւր ժողովուրդ մուտք գործեցին գեղակերտ «եկեղեցին Հայկական» որ նոր հարսի պէս զարդարուած էր սպիտակ շուշաններով: Առաջին շարականներու երգեցողութեան հետ սկսան դէպի երկինք բարձրանալ աղօթքներն ու բուրվառներէն դուրս ելած «գուլա-գուլայ» խունկերը: Տօնական շքեղ մթնոլորտ կար բոլորին մօտ, հոգեկան անբացատրելի գոհունակութիւն եւ երջանկութիւն կը զգացուէր միանգամայն:

Հոգեպարար երգեցողութենէն

ետք առաջնորդ սրբազանը կարճ ելույթ մը ունեցաւ եւ Աստուծոյ փառք տուաւ այս մեծ ծրագրի իրականացման համար ու շնորհաւորեց զայն իրականացնողներն ու նուիրատուները, յատկապէս եկեղեցւոյ հովիւ Գերայ. Տ. Պարետ Մ. Վրդ. Երէցեանն ու նախկին հովիւ Տ. Զաւէն Ա. Քհնյ. Արզումանեանը, Շինութեան յանձնախումբի անդամներն ու ճարտարապետները, որոնք արժանացան ջերմ ծափահարութեանց:

Եկեղեցականներու թափօրն այնուհետեւ դուրս գալով տեղի ունեցաւ եկեղեցւոյ մուտքին գետեղուած հայկական խաչքարի սուրբ միւռնոսով օծումը: Ապա նոյն շքախումբն առաջնորդուեցաւ եկեղեցւոյ վարի յարկը գտնուող «Կարապետ եւ Ազատուհի Եկաւեան Սրահ» որ յատուկ արարողութեամբ օրհնուեցաւ: Ան յետագային պիտի օգտագործուի երիտասարդական հաւաքոյթներու համար:

Այս բոլորի եզրափակումն եղաւ հարիսայի օրհնութեամբ: Անոր յաջորդեց ժողովրդային խրախմանքը, որուն մասնակցեցան շուրջ 1200 հոգի: Արդարեւ հսկայածաւալ վրանի ներքեւ գետեղուած յիմնակ մը սեղաններուն շուրջ համախմբուած ժողովուրդը լիութի յագեցաւ օրուան մատաղով: Մինչ այդ հայկական աւանդական տհոյ ու գուռնան եւ պարախումբերու համոյթներու զեղարուեստական բացօղեայ կատարումները ինքնաբերաբար ստեղծեցին փառատօնի ինքնատիպ մթնոլորտ մը, որ տեւեց մինչեւ ուշ գիշեր:

ՓԱՍԱՏԻՆԱՆ ՕԺՏՈՒԵՑԱԻ ԶԱՅԿԱԿԱՆ ԳԱՐՏԱՐԱՊԵՏՈՒԹԵԱՆ ՇՔԵՂ ԵԿԵՂԵՑԻՈՎ ՍԸ

Շարունակուած էջ 1-էն

Վրդ. Եարտմեան, Հայ Աւետարանական համայնքի ներկայացուցիչ՝ Վեր. Ճօ Մաթոսեան, Հայաստանի աւագ հիւպատոս Տիար Արմէն Լիլոյեան, Փասատինայի քաղաքապետ՝ Պիլ Պօկարտ, Գալիֆորնիոյ Ասէմպլիի անդամ Փոլ Գրիգորեան, Կլէնտէյլի քաղաքապետ Արա Նաճարեան, ինչպէս նաեւ ներկայացուցիչներ Ս.Դ.Հ. Հնչակեան Կուսակցութենէն, ՌԱԿ-էն, Նոր Սերունդ Մշակութային Միութենէն եւ գաղութի այլ կազմակերպու-

տենուէին հայկական տարբեր կազմակերպութեանց ներկայացուցիչներ, բարերարներ եւ հիւրեր:

Գործադրուեցաւ պատշաճ յայտագիր մը, որու ընթացքին խօսք առաւ Փասատինայի քաղաքապետ Պիլ Պօկարտ: Ան իր ուրախութիւնը յայտնեց այս հոյակերտ եկեղեցւոյ շինութեան առթիւ եւ ըսաւ թէ այս օրը յատուկ յիշատակութեամբ արձանագրած ենք Քաղաքապետական Խորհուրդի պատմութեան մէջ:

Ս. Գրիգոր Լուսաւորիչ եկեղեցւոյ օծման առթիւ շնորհաւորա-



թիւններէն: Պատարագի կիսուն տեղի ունեցաւ ընդմիջում եւ սկսաւ օծման հոգեպարար արարողութիւնը: Արդարեւ սրբալոյս միւռնոսով եւ ձեռամբ Յովնան Արք. Տէրտէրեանի տեղի ունեցաւ եկեղեցւոյ չորս պատերուն վրայ գետեղուած խաչերու եւ մկրտարանի օծումը:

Այնուհետեւ եկեղեցւոյ ժրջան հովիւը՝ Գերայ. Տ. Պարետ Մ. Վրդ. Երէցեան իր անհուն գոհունակութիւնն ու ուրախութիւնը յայտնեց որ տարիներու երազն արդէն իրականութիւն դարձած է շնորհիւ պատասխանատու մարմիններու հետեւողական աշխատանքին: Ապա իր շնորհակալութիւնները յայտնեց առաջնորդ Սրբազան հօր եւ բոլոր անոնց որոնք բաժին ունեցան այս աստուածահաճոյ եկեղեցւոյ շինութեան մէջ:

Առաջնորդ Յովնան Արք. Տէրտէրեան իր քարոզին մէջ շեշտեց այս հոգեւոր տաճարի իմաստին մասին ապա մէկ առ մէկ յիշեց օրուան յարգարժան հիւրերուն անունները եւ առանձնապէս յիշատակեց անունները բոլոր անոնց որոնք օգտակար ներդրում ունեցան Ս. Գրիգոր Լուսաւորիչ եկեղեցւոյ կառուցման գործին մէջ: Վերջաւորութեան սկիզբ մը նուիրեց Հայր Պարետին ի գնահատանք իր ծառայութիւններուն:

ՃԱՇԿԵՐՈՅԹ ԱՂԱՃԱՆԵԱՆ ՍՐԱՀԻՆ ՄԷՋ

Պատարագէն անմիջապէս ետք եկեղեցւոյ կից Աղաճանեան սրահին մէջ տեղի ունեցաւ ճաշկերոյթ, որուն ներկայ գտնուեցաւ աւելի քան 500 հոգի:

Տօնական կերպարանքով զարդարուած սեղաններուն շուրջ կը

կան հոչակագիր յղած էին Գալիֆորնիոյ կառավարիչ՝ Առնոլտ Շուարձնէկըր, Գոնկրէսական Ատամ Շիֆ եւ ուրիշներ: Ողջունի խօսքերով հանդէս եկան Բրշ. Վահէ Սրկ. Զարիստեան (հանդիսավար), եկեղեցւոյ յանձնախումբի ատենապետ Բշր. Միհրան Սրկ. Թումաճան եւ Ծխական Խորհուրդի ատենապետ՝ Պրն. Վահէ Իսկէնտէրեան:

Օրուան գեղարուեստական յայտագրին իրենց մասնակցութիւնը բերին Տիկ. Էլիզ Թաշճեան-ձեւարտեան, Լեւոն Աբրահամեան, ինչպէս նաեւ ջութակահար Արուսեակ Պալթայեան, նուագակցութեամբ Սարգիս Պալթայեանի:

Ճաշկերոյթի աւարտին տեղի ունեցաւ նուիրահաւաք հանգանակութիւն որմէ գոյացաւ պատկառելի գումար մը:

Եկեղեցւոյ հովիւ Գերայ. Տ. Պարետ Մ. Վրդ. Երէցեան ձեռնհասօրէն կատարեց հանգանակութեան գործը: Յայտնի եղաւ որ տակաւին Շինութեան Յանձնախումբը երեքուկէս միլիոն տոլար պարտք ունի դրամատան, որու տոկոսը միայն ամսական շուրջ 24 հազար տոլար է: Այս գումարին կու գայ աւելնալու ամսական ընթացիկ այլ ծախսերը, որոնց ընդհանուրին գումարը կը հասնի շուրջ 40 հազարի...:

Իր փակման խօսքին մէջ Գերշ. Տ. Յովնան Սրբազան ընդգծեց «Ձեր աղօթքի սնունդը դարձուցէք այս եկեղեցին» եւ անգամ մը եւս շնորհաւորեց եւ շնորհակալութիւն յայտնեց Ծխական Խորհուրդի Շինութեան Յանձնախումբի եւ Օժանդակ մարմիններու անդամներուն: Սրբազան Հօր «Պահպանիչ» աղօթքով վերջ գտան երկօրեայ յիշարժան տօնախմբութիւնները:

Advertisement for 'ՎԵՆԵՏԻԿՅԻ ԵՐԿՈՒՈՐԵԱԿՆԵՐԸ' (Venetian Toys). It features a logo with a camera and the text 'Հ.Բ.Ը.Ս. ԱՐՏԱԿԱՉՂ ԹԱՏԵՐԱՆՈՒՄ'. Below the logo is an illustration of a toy boat with figures. The main text reads 'ՎԵՆԵՏԻԿՅԻ ԵՐԿՈՒՈՐԵԱԿՆԵՐԸ' and 'Կատակերգութիւն 2 արարով'. It lists various toys and their prices, such as 'Հարթ, Սեպտեմբեր 8, 15, 22, 29 - ժամը 8:00-ին' and 'Կիրակի, Սեպտեմբեր 9, 16, 30 - ժամը 6:00-ին'. It also provides contact information: 'Տոմսերը կարելի է ստանալ' and 'Հ.Բ.Ը.Ս. Մանուկեան Կեդրոնի Արտաւազ Թատերասրահ 2495 E. Mountain Street, Pasadena'.

ՍԵՊՏԵՄԲԵՐ 15-Ի ԵԼՈՅԹԸ ՆՄՍՄ-Ի ԶՈՎԱՆԱԻՐՈՒԹԵԱՄԲ 818-391-7938


ՈՒՇԱԴՐՈՒԹԻՒՆ Եթէ ձեր տրամադրութեան տակ ունիք հայերէն գիրքեր, եւ կը ցանկանաք զանոնք նուիրել Կայծ Երիտասարդական Միութեան գրադարանին՝ ապա առաքեցէք հետեւեալ հասցեով: G.Y.O. 1060 N. ALLEN AVE. PASADENA, CA 91104



The 80th Anniversary of the Western Diocese



Third Pontifical Visit of His Holiness Karekin II Catholicos of All Armenians



SEPTEMBER 15, 2007 5:00 P.M.

Religious Service hosted by the Primate of the Archdiocese of the Episcopal Church, the Most Reverend Bishop Jon Bruno, followed by a reception.
երուն, պարային կրակոտ 5/6 ուրթմով Սերկէյ իր ջութակով անկաշկանդ ծաւալեցաւ ուռնացաւ, դրսեւորելով կատարեալ թէքնիքը, վիրթուողութիւնը, փայլուն նուագը, կատարեալ հնչականութիւնը: Կատարի ֆորթիսիմօ նուագով գազաթնակէտին հասցուցին մենանուագն ու նուագախումբը:

Որոտընդոտ ծափողջոյններու արժանացաւ: Սերկէյ ստիպուած եղաւ 4 անգամ բեմ վերադառնալու շնորհակալութիւն յայտնելու:

Բարեբախտաբար մեծ պատուներով շրջապատուած էր բացօթեայ «ամփիթատրոն»ը եւ յստակ կրցանք հետեւիլ, մանաւանդ մենանուագողին: Յուզուածով դիտեցի իր հրեշտականման դէմքը, սեւ

զանգուր մագերով լուսաւորուած փարոսի նման, սլացիկ նրբակազմ մարմինը, դիմագծի բոլոր մկանները ցայտուն կերպով պրկուած, կրքոտ ու զգացմունքային կը բացայայտէր իր ներքին ապրումները:

Deneve ղեկավարեց ճշգրիտ, զգայուն եւ պայծառ: Նուագախումբը հնչեց կատարեալ:

Յայտագրի վրայ էր նաեւ Back-ի «Passacaglia and Fugue» C minor-ը եւ Dvorak-ի սիմֆոնի թիւ 8 in C major:

2000ին գրածս դարձեալ կը կրկնեմ «Ձինք կը տեսնեմ Հայֆեցի-Օյստրախի շարքին: Փոքր տարիքէն անոնց վիրթուողութիւնը ունի արդէն: Մեր ապագայ հայ Հայից-Սերկէյին բարձրագոյնը կը մաղթեմ:

ՍՐԲ. ԳՐԻԳՈՐ ԼՈՒՍԱՒՈՐԻՉ ԵԿԵՂԵՑԻՈՅ ՀԱՄԱՅՆԸ ՆՈՒԻՐԱԿԱՆԱՑՈՒՅ ԻՐ ՏԱՐԻՆԵՐՈՒ ԵՐԱԶԸ

Մարունակուած էջ 1-էն

ցապէս բարձր գնահատուած ինչ որ մերօրեայ իրականութիւնը վերակառուցուած պաշտամունքի օրրան այս եկեղեցին, որուն բազմաձայնային շինարարութիւնը ծանր այլ մշտաշարունակելի՝ գոհողութեան արգասիքն է առանձնապէս Փաստիկայի հայ համայնքին, եւ ընդհանրապէս քաղաքային հայազգային կառուցողականութեան: Գործածուած աւանակները կը բնորոշեն երկու յստակ պարագաներ. նախայն՝ որ նորակառոյց եկեղեցւոյ կառուցումը նշմարտապէս նիւթական մեծ գոհողութիւններ պահանջեց: Երկրորդ՝ նոր նիւթական յանձնառուութիւններ կան, որոնք ծանր պարտաւորութիւններու տակ կը դնեն պատասխանատուներն ու համայնքը:

Այսպէս է որ այրած ու բարգաւանած է մեր ժողովուրդը. այսպէս է որ պահած է իր յեզուն, գոյատեւած է մեր եկեղեցին. այսպէս է որ ան տէր կանգնած է իր հայրենիքին, մշակոյթին, նարտարապետութեան, իր բոլոր կառոյցներուն ու զարկ է տուած իր քաղաքակրթութեան: Այսպէս է եղած՝ դարեւ ընդ դարեւ, իր կազմութեան միջոցով օրս: Այս ոգի-

ով է որ մեր ժողովուրդը տուած է ու կու տա՞ միշտ, կանգուն պահելու համար իր ազգային կառոյցները, անպայմանադրականօրէն: Մենք հաւատացողներ ենք, որ մօտիկ ապագային կը հարթուին նիւթական պարտաւորութիւնները, եւ նորակառոյց սուրբ տաճարը կը փարատէ իր նիւթական տագնապները, նոր ու աւելի ուժգին նուիրուելու համար իր առաջնութեան: Մեր մաղթանքն է, որ պատասխանատուները միշտ աչքի առաջ կ'ունենան տակաւ հայօրէն նօսրացող մեր գաղութներու գոյութեան պահպանման յստահատեցուցիչ գոյալիմակը, որ շատ յանախ աւելորդ մերթուրմ կը համարուի ման մեծաձայն կառոյցներու կառուցումը օտարափերու վրայ:

Ձերմօրէն կը շնորհաւորենք Փաստիկայի նորակառոյց Սրբ. Գրիգոր Լուսաւորիչ եկեղեցւոյ հոգեւոր հովիտի Տէր Պարտ. Մ. Վարդապետ երեցեանը, Ծիսական Խորհուրդի անդամները, բարերար բարեպաշտները եւ մասնաւորաբար շրջանի հայ համայնքը՝ Նաւակատիքի եւ Օժման արարողութիւններու բարեբաստիկ առիթներով մաղթելով բոլորին ամենայն բարիք ու կ'ըսենք՝ Վարձեք մի կատար:



Սերկէյ Խաչատրեան եւ Անգիլե Գեշիշեան-Մուրատեան

զգայուն մենանուագով վճիտ ձայնի ելեւէջներով, լիահնչուն հիւթեղ «թոն»երով: Արդէն առաջին վայրկեանէն գրաւեց ունկնդիրներու ուշադրութիւնը: Վարպետօրէն պեղեց առաջին մասի քնարական քաղցր եւ տխուր կարօտի զգացումները, յստակ նրբերանգներով, խորունկ հասկացողութեամբ: Անոր ջութակի ձայնը հոյակապ էր, երգել կու տար դժուար երաժշտական գիծերը: Իսկ վերջին Allegro, ben marcato հակապատկերը նախորդէ

Հայ Թելեթայմը կը վերադառնայ 18ը Ալիք Վրայ Ոչ թէ մէկ, ոչ թէ 2, ոչ թէ 3 ժամ այլ Օրուան 24 ժամերը

Մարաթը 7 օր անվճար

Հարկ չկայ բաժանորդագրուելու - 40 Յաւելեալ ալիքներ

Յաւելեալ տեղեկութիւններու համար դիմել Հայկական Թելեթայմ (818) 982-2400

The Armenian Teletime Is Back On Channel 18

Not 1 Hour, Not 2 Hours, Not 3 Hours But 24 Hours Per Day

7 Days Per Week, Free

No Subscription Fee - Plus 40 Additional Channels

For info call The Armenian Channel (818) 982-2400

ԽԱՉՎԵՐԱՅ ՏՕՆ

ԿԻՐԱԿԻ, ՍԵՊՏԵՄԲԵՐ 16, 2007 ԻՆ

ՍՈՒՐԱ ԵՒ ԱՆՄԱՀ ՊԱՏԱՐԱԳ

ՍՈՒՐԱ ՍԱՐԳԻՍ ԵԿԵՂԵՑԻՈՅ ՄԷՁ

700 S. La Verne Ave. E. Los Angeles, CA 90640

Պիտի Պատարագէ և Քարդէ՝

S. ՆԱՐԵԿ Ա. ԶՀՆՅ. ՄԱՍԱՐԵԱՆԸ

Փամերգոյթիւն՝ ժամը 9:30 ին

Ա. Պատարագ՝ ժամը 10:30 ին

Փամերգոյթեան և Սուրբ Պատարագի հոգեզմայլ երգեցողութիւնը պիտի կատարէ՝

ԽԱՉԱՏՐԵԱՆ Դ.ՊՐԱՅ ԳԱՍ ԵՐԳՉԱՆՈՒԹԱՐԸ

ՂԵԿԱՎԱՐՈՒԹԵԱՄԲ՝ ԲՐԸ. ԱՐԻ ՍՐԿ. ՏԵՄԻՐԱՆԻ և ԵՐԳԵՀՈՆԱՀԱՐՈՒԹԵԱՄԲ՝ ՈՎԱՍԵՆԱ ՄԵՂՐԻԿԵԱՆԻ

Յաւարտ Սուրբ Պատարագի, պիտի կատարուի աւանդական «ՄԱՏԱՂՕՐՀՆԷՔ» և պիտի բաժնուի հաւաստեցալներուն: Անոնք որոնք կը փախածն են Երազմալ օգնելու մատաղիմ՝ կը խնդրենք Երազմալներուն շնորհով միջև Սեպտեմբերի 16ը Յերազմալ, կամ հետագային Եկեղեցւոյ գրասենեակը հետեւեալ հեռախօսաթիւով:

Tel. (323) 269-0907

Հովի և Ծիսական Խորհուրդ

ԽՈՒՐ

ԱՆՍՈՎՈՐ ԱՍՏԻՃԱՆԻ ՄԸ ՊԱՏՄՈՒԹԻՒՆԸ

ՆԱՀԱՊԵՏ ՄԵԼՔՈՆԵԱՆ

1877-ին շինուած այս աստիճանը, որ բազմահազար այցելուներ եւ ուխտաւորներ հրապուրած է, կը գտնուի Նիու Մեքսիքո նահանգի, Սանթա Ֆէ քաղաքը: Սակայն ի՞նչ կայ այնքան հրապուրիչ այս սովորական փայտէ շինուած աստիճանին մասին, որ փոքր եկեղեցւոյ մը վերնատունը կ'առաջնորդէ զայն գործածողները:

Անսովորը այն է, որ աստիճանը 20 ոտք իր բարձրութեանը մէջ, օդին մէջ երկու անգամ ինքն իր վրայ՝ 360 աստիճան դարձած է առանց որեւէ կեղրոնական սիւնի, զարմանք պատճառելով մերօրեայ բոլոր ճարտարապետներուն, վարպետ աստղագործներուն, շինարարներուն եւ զինականներուն:

Ո՞վ կառուցած է այս հրաշալի աստիճանը:

Ահալանիկ պատմութիւնը: 1848ին, երբ Նիու Մեքսիքո նահանգը մաս կազմեց Ամերիկայի Միացեալ Նահանգներուն, Սանթա Ֆէ քաղաքը բազմամշակութ բնակչութիւն ունէր: Ամերիկացի հնդիկներ, սպանացիներ, մեքսիկացիներ եւ անկլօ սաքսոններ, տարբեր գունաւորում մը կու տային սա փոքր քաղաքին իրենց սովորութեամբ ու կենցաղով:

Այս ժամանակամիջոցին մէջ էր, որ շրջանի հովուապետութիւնը կը ստանձնէր ժան Պաբլիսթ Լամի Եպիսկոպոսը, որուն առաջնորդարանը կը գտնուէր Օհայօ նահանգի Սինսինատի քաղաքը:

Ան հարկը զգալով Քրիստոնէական ճշմարիտ Լոյսը տարածելու խաւարամիտ մարդոց՝ նամակներ գրեց իր հոգեւոր եղբայրներուն եւ քոյրերուն, որպէսզի փութան Նիու Մեքսիքո նահանգը եւ լծուին կրօնատարարական հոգեւոր աշխատանքի: Իր խնդրանքին առաջին պատասխանը եկաւ Քէյթաքի նահանգի Լորէթթօ Քոյրերէն: 1852-ին եօթ քոյրեր, ճամբորդութեան տաժանելի եւ դժուարին պայմանները յաղթահարելու կամքով, ճամբայ կ'ելլեն դէպի Սանթա Ֆէ քաղաքը:

1853ին անոնք կը հիմնեն աղջկանց վարժարան մը եւ կ'ունենան 300 աշակերտներ: Լամի Եպիսկոպոսը, որ մեծապէս աստար կը հանդիսանար մայրապետներու նուիրական աշխատանքին, կ'որոշէ փոքր եկեղեցի մը կառուցել վարժարանի կողքին, չար եւ նման Փարիզի Sainte Chapelle տաճարին, որ հրապուրած էր եպիսկոպոսը իր տղայական օրերուն:

Ան Սանթա Ֆէ կը հրաւիրէ տաճարի ճարտարապետը՝ Անթուան Մուլիէն եւ իր որդին, որ նոյնպէս կը կրէր իր հօր անունը:

Այն օրերուն Լորէթթօ Քոյրերը, կը կարողանան 30,000 տոլար հանգանակել այս մատուռի կառուցման համար:

Կոթիկ ճարտարապետութեամբ այս մատուռը՝ ունի 100 ոտք երկարութիւն, 26 ոտք լայնութիւն եւ 69.8 ոտք բարձրութիւն: Շինարարութիւնը տեւած է հինգ տարի: Մուլիէն ճարտարապետը Ֆրանսայէն բերել տուած է վարպետ շինարարներ, որոնք կարողացած են Փարիզի տաճարի կրկնօրինակը կառուցել Սանթա Ֆէ քաղաքին մէջ:

Կը պատմուի թէ շինարարութեան ընթացքին Մուլիէն որ յառաջացած տարիք ունէր, տեսողութեան զժուարութեան պատճառաւ վերջին երկու տարին գործը յանձնած էր իր երիտասարդ տղուն ու մեկնած Ֆրանսա:

Մատուռը վերջապէս կը կառուցուի առանց վերնատուն առաջնորդող աստիճաններու, ինչպէս այն օրերուն սովորական էր Եւրոպայի մէջ, որովհետեւ մեծ բաժին պիտի առնէր՝ հաւատացեալներուն սահմանուած աղօթատեղիէն: Յետոյ... 1800-ական թուականներուն Եւրոպայի մէջ իգական սեռին արտօնուած էր անգամ մաս կազմելու երգչախումբերուն: Ուստի մարդիկ՝ որպէս երգչախումբի անդամներ, փայտեայ աստիճանով դիւրութեամբ կարող էին վերնատուն բարձրանալ եւ Ս. Պատարագը կամ այլ արարողութիւններ երգել վերնատունէն:

Լորէթթօ Քոյրերուն եւ մանաւանդ վարժարանի աշակերտուհիներուն համար, մեծ անպատեհութիւն ու դժուարութիւն մը ստեղծուեցաւ, երբ անոնք հարկը կը զգային իրենց երկար զգեստներով 20 ոտք փայտեայ աստիճանի մը վրայ վերնատուն բարձրանալու:

Մայրապետներուն համար անհասկնալի էր, աստիճանի մը չզոյուլութիւնը:

Այս պատճառաւ ալ, քանի մը տարբերակներ կային այդ օրերուն, որ խորապէս կը չարչրկէին քոյրերը: Արդեօք ճարտարապետը հարկը չզգա՞ց աստիճան մը կառուցանելու: ք Արդեօք մոռցուեցա՞ւ երգ գլխաւոր ճարտարապետը անհանգստութեան մը պատճառաւ վերադարձաւ Ֆրանսա: Կամ արդեօք կրտսեր Մուլիէն որ գինեմով մըն էր, երբ հիւանդացաւ ու մեռաւ, ոչինչ յայտնած էր իր գործընկերներուն:

Ուրեմն ի՞նչ ընել: Շինարարութիւնը հասած էր իր աւարտին: Նկատի ունենալով որ սովորական աստիճանի մը կառուցումը բաւական մեծ տեղ պիտի խլէր մատուռէն, Լորէթթօյի հաւատացեալ քոյրերը որոշեցին դիմել երկնային միջամտութեան: Անոնք որոշեցին ինը օր ծոմ պահել ու աղօթել Հայ Յովսէփին, որ կը նկատուի հովանաւոր սուրբը աստղագործներուն եւ շինարարներուն:

Հաւատացեալ մայրապետներուն համար անպայման պատասխան մը պէտք էր որ ըլլար:

Եւ պատասխանը չուշացաւ: Ծոմապահութեան եւ աղօթքի իններորդ օրը, մինչ Լորէթթօյի քոյրերը կ'աղօթէին, մատուռին մէջ ճերմակամօրուս չափահաս մարդ մը Քոյրերուն վարժարանը գալով, կ'առաջարկէր իրենց փափաքած աստիճանը կառուցել: Մեծաւորը անմիջապէս գործի կ'ընդունի զայն:

Այն օրերուն ասօթ կը սեպուէր իգական սեռին, յատկապէս քոյրերուն կամ վարժարանի աղջիկներուն համար, խօսքի բռնուրի յատկապէս արական սեռին հետ:

Կարելոր է նաեւ նշել, թէ այն օրերուն մանակի վճարումներու սովորութիւն իսկ չկար: Արհեստաւորը հարկ էր որ նախ գործը վերջացներ եւ ապա պահանջած գումարը ստանար: Ուստի Լորէթթօ Քոյրերուն տոմարին մէջ, ոչ մէկ արձանագրութիւն գոյութիւն ունի վճարումի համաձայնութեան մասին, այլ միայն յիշատակութիւն կայ թէ չափահաս մարդ մը, աւանակի մը հետ եկած էր աստիճան մը կառուցելու:

Մարդուն ձեռքին մէջ նշմարուած են մուրճ մը, սրոց մը եւ աստղագործներուն յատուկ գծաքաշ մը:

Անձանօթ աստղագործը միայն ինդրած էր որ ոչ ոք չխանգարէր իր աշխատանքը՝ մինչեւ գործին աւար-



տը: Մայրապետները սիրով կատարած են անոր խնդրանքը: Վերջապէս աստիճանը շինուած է վեց ամսուայ ընթացքին:

Երեսուներեք հաւասար փայտի կտորներ կը լրացնեն աստիճանին բարձրութիւնը՝ դէպի վերնատուն, երկու անգամ ինքն իր վրայ դառնալով օդին մէջ, առանց կեղրոնական սիւնի: Հետաքրքրականը այն է սակայն, որ աստղագործը, ոչ մէկ գամ գործածած է եւ ոչ ալ խէժ:

Ամիսներ ետք... Քոյրերուն մեծաւորը՝ զգալով թէ ոչ մէկ ձայն կու գայ մատուռէն, ներս կը մտնայ, կը տեսնէ աստիճանը, որ շատ քիչ տեղ գրաւած է եկեղեցւոյ յատակագիծէն, եւ երբ կը փորձէ իր ուրախութիւնն ու գոհութիւնը յայտնել շինարարին... կ'անդրադառնայ որ ան մեկնած էր արդէն: Լորէթթօ Քոյրերը ի գուր փնտրած են անձանօթ վարպետ աստղագործը, զայն վարձատրելու յոյսով:

Շինարարը մեկնած էր առանց իսկ մնաք բարով ըսելու կամ աշխատանքին վարձքը պահանջելու:

Հետաքրքրականն այն է սակայն, որ ոչ ոք նշմարած էր թէ գործածուած փայտերը ինչպէ՞ս եւ ե՞րբ բերուած էին մատուռը: Յետագային ճարտարապետներ ու վարպետ աստղագործներ, շինարարներ, գործածուած փայտին տեսակն իսկ չեն գտած Ամերիկայի Միացեալ Նահանգներու տարածքին, եւ ապահար դիտած են օդին մէջ բարձրացող այս անսովոր աստիճանը, որուն տուած են հրաշակերտ աստիճան անունը: Յետագային՝ Լորէթթօ Քոյրերը գեղեցիկ փայտեայ ցողերով եզերած են աստիճանները, դիւրաւ կարենալ բարձրանալու համար:

Լորէթթօ Քոյրերուն հիմնած վարժարանը փակուեցաւ 1968-ին, երբ աշակերտներուն թիւը նօսրացաւ, պետական վարժարաններու ձրի ուսման պատճառաւ, իսկ հողատարածքը ծախուեցաւ 1971-ին: Սակայն եկեղեցին, որպէս ուխտատեղի եւ պատմական թանգարան, բաց կը մնայ տարին 364 օր: Մեր Տիրոջ՝

Յիսուսի Քրիստոսի Ս. Մնունդին օրն է միայն, որ կը փակուի:

Եկեղեցին այժմ կը գործածուի հոգեւոր եւ այլ պատշաճ երաժշտական հանդէսներու, ինչպէս նաեւ խորհրդակատարութիւններու համար, հարսանիք, ամուսնական ուխտերու վերահաստատում, թաղման կարգ, եւ այլն:

Բազմահազար այցելուներ, աշխարհի չորս ծագերէն ուխտի կու գան այս եկեղեցին եւ հիացմունքով կը դիտեն հրաշակերտ աստիճանը, որ ճշմարտապէս եւ ոչ կարծեօք մեր Տէրը պատասխանած էր հաւատացեալ Լորէթթօ Քոյրերուն աղօթքներուն եւ խնդրանքին եւ երկնային միջամտութեամբ Հայր Յովսէփի, կառուցած է այս անսովոր ու գեղեցիկ փայտեայ հրաշակերտ աստիճանը, որ կանգուն կը մնայ 130 տարիէ ի վեր:

Դժբախտաբար այսօր մարդիկ հեռացած են Աստուծմէ, եկեղեցիէ, հաւատքէ...: Հայ մարդի գիտէ՞ արդեօք իր Լուսաւորիչ Հայրապետին խօսքը, թէ «Հաւատքի ճշմարտութիւնը լոյս է մտքի աչքերուն համար...» (Յաճախապատում):

Ս. Գրիգոր Տաթևացի կը գրէ. «Աստուած իշխանական հոգի տուած է մարդուս եւ ծառայական մարմին»: Դժբախտաբար այսօր նիւթական աշխարհի ընձեռած այս մակերեսային երեւոյթները, աղօտած եւ աղարտած են մարդու հոգին: Այսօր շրջուած է Աստուծոյ պարգեւը, երբ մարմինը դարձած է իշխանական ու հոգին ծառայական:

Աթմասա Աղեքսանդրացի մեզի կը յիշեցնէ... «Աստուծոյ ճանչալու առաջին տեսակը ճշմարիտ հաւատքի դաւանութիւնն է»: (Ս. Ա. Աղեքսանդրացի, Յամենասուրբ Երրորդութիւն): Իր կարգին, Հայ կղերը՝ եկեղեցւոյ Ս. Խորանէն քանիցս քարոզած է հաւատքի գորութեան մասին, ըսելով. «Եթէ մարդ մանանխի հատիկի մը չափ հաւատք ունենայ... կարող է լեռները շարժել»:

Այսօր տխուր պատկերը որ կը պարզուի մեր աչքերուն առջեւ այն

ՈՒԹ ՏԱՐԵԿԱՆ ԹՈՌՆԻԿԻՍ ՆՈՒԷՐԸ

ԱՐԱ ՄԱՐԳՍԵԱՆ
(ՊԱՐՄԿԵՐԷՆԷՆ ԹԱՐԳՄԱՆԵՑ
ՆՈՒԱՐԴ ԶԱՐԳԱՐԵԱՆ)

Հինգշաբթի օրերը իմ ու կնոջս ամենալավ օրերից են: Շաբաթուկայ այդ օրը թոռնիկներս մի քանի ժամով մեզ մօտ են, եւ այդ օրը երջանկութիւնը թեւածում է մեր տան յարկի տակ: Սիրունիկ Ալինայիս պիտի տանեմ դաշնամուրհի դասատուի տունը որը համարեայ մեր թաղամասում է: Կայ արդեօք աւելի հաճելի պահ պապիկի ու տատիկի համար, այն էլ մի ժամանակաշրջանում, երբ տիրում է համատարած մեքենայացուած կեանք եւ ելքթրոնային հաղորդակցութիւն: Հարագատների հանդիպումները պատահական եւ հնարաւորութեան սահմաններում են: Քսան մէկերորդ դարը նորագոյն կեանքին վարժուելու դժուարութեան դար է:

Այնուամենայնիւ այսօր վաղ առաւօտից մենք ուրախութեամբ սպասում էինք միամսեայ ճամբորդութիւնից նոր վերադարձած մեր սիրելիներին:

Երեկոյեան ժամը չորսին հարագատներս եկան, գրկախառնուելուց, համբուրուելուց յետոյ, տատիկը ամենաջերմ ու սիրալիւր հիւրասիրութեամբ ողջունեց նրանց գալուստը, սկսուեց մտերմիկ ու հաճելի գրոյց, պատմեցին իրենց տպաւորութիւնները:

Ութամեայ թոռնիկս՝ Ալեքսը վերկացաւ եւ յատուկ կեցուածքով մօտեցաւ ինձ, երկարեց մի գեղեցիկ տետր, կարմիր ու սպիտակ գծաւոր կազմով որի վրայ երեւում էր Քանաաայի դրօշի խորհրդանիշ չիւնարի կարմիր տերեւը Պապիկ այս

նուէրը քեզ համար եմ բերել: (60 թերթ 6x8 ինչ չափերով): Ամուր գրկեցի, շոյեցի թուխ մագերը եւ յայտնեցի շնորհակալութիւնս: Զեռքերս սրտիս պէս եւ սիրտս հոգուս պէս բաբախում էր, նորից լսեցի իր ձայնը «պապիկ դու տետրակ ու մատիտ ու գրիչ շատ ես սիրում»: մտովի անդրադարձայ որ թոռնիկս այդ նուէրը ոչ միայն հեռաւոր Քանաաայից որպէս յիշատակ, այլ նոյնպէս ի նկատի է ունեցել հայրերի տօնը, եւ ինձ որպէս իր հօր հայրը չի մոռացել, այդ արդէն գերազանց էր:

Նուէրը սեղմեցի սրտիս եւ համբուրեցի ասելով՝ սողաս այս տետրակը շատ ու շատ արժէք ունի ինձ համար, դէմքը պայծառացաւ ուրախութիւնից, իսկ ես խորասուզուել էի նրա զգայուն հոգու մէջ եւ երագում ու ցանկանում էի, նրա կրօնային հոգին եւ սիրող սիրտը, վսեմ բնաւորութիւնը մինչ երիտասարդ տարիք եւ այնուհետ անփոփոխ եւ հաստատ մնայ: Թոռներս ունենան մարդկային վարքագիծ: Յանկացայ որ երանի մանկութեան մաքուր հոգին մարդու մէջ միշտ անադարտ մնայ: Դեռեւս տետրը ձեռքիս այս մտքերի մէջ էի, արդէն դաշնամուրհի դասի ժամն էր եւ այդ օրը երկու թոռնիկներս Ալինային եւ առաջին անգամ Ալեքսին միասին պէտքէ ուղեկցէի:

Երեխաներին դասարան հասցնելու համար այնքան շտապեցի որ մոռացայ ձեռնափայտս վերցնել: Վերադարձին արդէն մթնել էր, թոռանս հետ համաքայլ գնալը դժուար էր, ուստի խնդրեցի «Ալեքս ջան շատ արագ ես գնում չեմ կարող քեզ պէս քայլել, մանաւանդ որ ձեռնափայտս մոռացել եմ»: Վերա-

դարձաւ եւ իր փոքրիկ ձեռքով բռնեց ձեռքս եւ ասաց «պապիկ ես կ'օգնեմ»: Այլ խօսքով ձեռքիս ձեռնափայտ դարձաւ: Ես մեծ հրճուանքով տուն վերադարձայ: Նորից ձայնը լսեցի որ հարցնում էր «Պապիկ, պապայիս էլ այսօրուայ պէս առաջին անգամ դաշնամուրհի դասատուի տունն ես տարե՞լ...» 38 տարի ետ նայեցի այն ժամանակ առաջին անգամ հենց նոյն տարիքին, ութ տարեկանում դաշնամուրհի դասարան տարայ, եւ այսօր կարծես նոյն տղայիս ձեռքն էր իմ ձեռքում: Յիշեցի երկու տարի առաջ Ալեքսն ու ես մեր պատշգամում նստած էինք, նա ուզեց իր հօր եւ հօրաքրոջ մասին պատմեմ, ես էլ աշխատում էի ինչ որ հետաքրքիր եւ յիշողութեան արժանի է՝ մանկապարտեզ գնալներն ու դպրոցի առաջին օրերի լացը, նրանց կարգ ու կանոնը, կարգապահութիւնը եւ առաջադէմ աշակերտ լինելը, ինչ որ վերջիջում ու պատմում էի մինչեւ հասայ դաշնամուրհի պարապմունքները: Ասեցի երբ հայրդ քո տարիքին էր գուցէ աւելի մեծ, մի Հինգշաբթի երեկոյ մի բիսնիստ տիկնոջ մօտ որի տունը մեր տան մօտ էր, ձեռք-ձեռքի քայլելով գնացինք, հենց առաջին օրը ուսուցչուհու ուղարկութեան արժանացաւ: Ուսուցչուհին ուրախացաւ որ հօրդ նման աշակերտ ունի: Շաբաթը մէկ անգամ այդ իմ գործն էր, հայրդ տուն վերադարձին ախորժակով ուսում էր իր առիծի բաժինը, մի շիշ քոքայով ու նոր հանգստանում... Երկու տարի առաջ այս տղերը հեքիաթի պէս պատմել էի իրեն:

Մի ըոպէ կանգնեց եւ ասաց, այսօր էլ դու ինձ ուսուցչուհու մօտ տարար, արդեօք պապայի պէս լաւ էի: Մագերը համբուրեցի գովեցի իր

յիշողութիւնը, որ բոլոր պատմածներս յիշում էր: Դու պապայիցդ էլ աւելի լաւ էիր, որովհետեւ ուսուցիչդ քեզ անվերջ պրաւօ էր ասում, եւ երեւում էր որ քեզ պէս աշակերտ ունենալու համար շատ ուրախ է: Զրուցելով ու ոգեւորելով տուն հասանք:

Տատիկը անհամբեր հարցրեց ես էլ ասացի որ հօր պէս շատ լաւ սկսեց: Ալեքսը անմիջապէս հարցրեց իսկ ուսելու ի՞նչ ունենք:

Տատիկը ծիծաղելով ամուր գրկեց նրան ասելով. ինչ որ ցանկանաս: Ալեքսը այս էլ չէր մոռացել ու ուսելիքն ու խմելիքը ձեռքը սկսեց ուղարկութեամբ իր հետաքրքիր ծրագրին հետեւել:

Ես իմ մտքերիս մէջ հիանում եմ որ ինչպէս երկու տարուայ յիշողութիւնները այսօր նոյնութեամբ կատարուեց, կեցցես իմ լաւ թոռնիկ, ցանկանալով իրեն երջանկութիւն եւ յիշողութիւն մտածում էի տեսնես իր թոռնիկն էլ ի՞նչ հարցեր կ'ուղղի իրեն: «Պապիկ հիմա կարող եմք տարբեր մոլորակներ գնալ կամ... ես ինչ գիտեմ ապագան ինչպէս կը լինի... այս էլ իմ մտքերիս որոշ մասնիկն է:

Կէս գիշերն վաղուց անցել է բոլորը քնել են, Ալեքսն էլ խաղաղ քնած է բաց ես՝ պապիկը, նրա 60 թերթիկով նուէրը, այդ տետրը ինձ գրկեց քնելուց, եւ ես անցայ փոքրիկ գրասեղանիս ետեւ եւ մտածեցի մի բան գրեմ յիշատակ, բայց ի՞նչ գրեմ որ յիշի եւ իմանայ որ իր այս գեղեցիկ գործը էլի կատարի եւ յիշարժան բոլոր օրերը միշտ յիշի եւ ուրախացնի ծնողներին եւ հոգեգմայլ անուշութեամբ յագեցած յիշատակներ նուէրի նրանց: Հանդէպ նրանց սէր ու գուրգուրանք եւ

Շաբ.ը էջ 19



Wahib's
MIDDLE EAST RESTAURANT
الشرق مطعم
MEDITERRANEAN
LEBANESE FOOD



Wahib

COME IN AND ENJOY OUR PATIO AND THE FINEST SHISA "HOOKAH"

CATERING FOR ALL OCCASION

FAMILY ENTERTAINMENT
BANQUET HALL
EVERY
FRIDAY ~ & ~ SATURDAY
NIGHT
INTERNATIONAL ~ ARABIC
CALL FOR RESERVATION



MOUHAMAD SALEM
& HIS BAND ~ VARTAN / NAZO & AMIR



BELLY~DANCING

910~E.MAIN ST, ALHAMBRA, CA.
TEL 626-281-1006 626-587-1048
FAX 626-281-3641

ԱՅԺՄԵԱԿԱՆ ՆԻԻԹԵՐ

ՇՓՈԹ ԺԱՄԱՆԱԿՆԵՐ ՄԵՂԱԻՈՐՆԵՐԸ ԿԸ ՀԱՐՍՏԱՆԱՆ ԵՒ ԱՆՄԵՂՆԵՐԸ Կ'ԱՂՔԱՏԱՆԱՆ

ՎԱՐՊԱՆ Ա.ՔՀՆՅ. ՏԻԻԼԿԵՐԵԱՆ

Այսօր, ստուգապես կրնանք ըսել, թե հայրենիքի սէրը՝ գրեթե ամէն հայու սրտին մէջ որոշ նուազում մը կը բացայայտէ:

Ազգայնորէն տժգունած հայը՝ եսականօրէն կը թեքի իր ինքնութիւնը եւ ինչ որ աղերս ունի իր կեանքին, իր շահերուն եւ վայելքներուն հետ, իր ցանկութեան թիրախ կը դարձնէ:

Ազգային եւ տոհմային նուիրագործուած բոլոր արժէքները կը համարէ նախապաշարուած ու ժամանակավրէպ:

Կ'անգիտանայ իր հայու ինքնութիւնը, կը դադարի մայրենի լեզուն խօսելէ, կը հրաժարի իր տոհմանունէն, կը մեկուսանայ ազգային ոգեւորութիւններէ ու եկեղեցի յաճախելէ եւ օտար շրջանակներու մէջ կը շեշտի իր ներկայութիւնը, նիւթական օժանդակութիւններով եւ պատուակալ պաշտօններու կատարումով:

Այսպիսի ժխտական ու եսական նահանջ մը ազգային պարտականութիւններէ, կը խոչտանգէ իր մէջ հայու խղճմտանքը եւ կը դարձնէ իր անձը անսիրելի ու վանողական յաչս հասարակութեան:

Դարը աղմկարար է, աշխարհի վերջին մարդը կը լսէ ու կը տեսնէ իր գործած նախճիրները:

Բարին լուսկեաց է, ու ցաւալի է, որ իր կատարած սխրագործութիւնները չեն հասնիր ու լսուիր լսողութիւններէ:

Ողջամտութեան ձայները տկար են եւ ի գորու չեն խեղդելու խռովարարներու յարուցած որոտալի աղմուկը:

Ժամանակը՝ իր յարափոփոխ հոլովոյթով՝ միշտ անգուլթ ու ապերախտ եղած է հայ ժողովուրդի իրաւունքներուն եւ պահանջներուն հանդէպ եւ խրախուսած է մարդկային հայակեր ճիւղները, որ կեղեքեն ու հարստահարեն հայութիւնը եւ գրկեն ազգային խաղաղութեան եւ ապահովութեան բարիքներէն:

Երկրի վրայ, կա՞յ գորութիւն մը, որ կարենայ կասեցնել ամբարիշտներուն ասպատակութիւնները, շղթայագերծուած անզօր ժողովուրդներու կեանքին դէմ:

Թէեւ՝ մարդկային քառասցած հասարակութեան մէջ նուազ չէ թիւը Աւետարանի սիրոյ պատերազմներով պայքարողներու, բայց մեղքին բռնակալին գահը կը մնայ անասան եւ կարելի չէ գահընկեց ընել զայն իր ժայռանիստ պատուանդանէն:

Իրապէս, ափսոսալի պիտի ըլլար ժողովուրդի մը ճակատագիրը,

եթէ օրհասական պահերուն անանուն հերոսներ եւ ազատամարտիկներ չյարնէին ժողովուրդի ծոցէն եւ չազատագրէին հայութիւնը ազգաջինջ գուլումներէ:

Ո՞վ պիտի փրկէր հայուն վտանգուած գոյութիւնը յաւերժութեան տատասկոտ ճանապարհին վրայ, եթէ այդ գարունամեայ կորիճները չմաքառէին հոգեկան բարձրագոյն պատնէշներու վրայ եւ չանմահանային:

Այս մտայլ ու մթին ժամանակներուն, աշխարհը կը շնչէ աղիտաբեր անակնկալներու երկունքով: Աշխարհը ենթակայ է շարունակական յարափոփոխութիւններու: Ամէն բոսակ արտառոց նորութիւնները եւ նորոյթները կ'այլակերպեն մարդկութեան դիմագիծը ու չեն կրնար զատորոշել այլը եւ կինը իրենց բնական կերպարներուն մէջ:

Թէ հասկնար, թէ ո՞վ է իրաւը եւ ո՞վ է գնահատողը, ո՞վ է աշխարհականը եւ ո՞վ հոգեւորականը, անստուգելի շփոթութիւն մը մտած է հասարակական բարքերու մէջ եւ ծանօթ ու անծանօթ մարդիկը դարձուցած է անճանաչելի ու անվստահելի:

Առաքինութեան ճառագայթները փոխարինուած են մոլութիւններու թանձր ստուերներով: Ամէն բան, որ գեղեցիկ է՝ տգեղ կը տեսնենք եւ ամէն ինչ որ բնական է՝ արուեստական կը թուի մեզի:

Մարմինը եւ հոգին, ամէն մարդու մէջ անխտիր կը գործեն ոխակալ ոտիներու մոլոցքով: Առաջին յայրատ ցանկութիւնները կը գոհացուին եւ երկրորդին արդար պահանջները կը ժխտուին:

Պախարակելի ու ամօթալի տեղափոխութիւն մը կատարուած է մարդոց եւ իրերու միջեւ:

Սուտը փոխարինուած է ճշմարտութեամբ, սէրը ատելութեամբ, բարոյականը անհաւատարմութեամբ եւ հաւատքը անաստուածութեամբ:

Այս ներսած կլիմային վարակումին անաղարտ կը մնան սակաւթիւ բարեպաշտներ միայն, որ կրնանք զանոնք հուշակել Քրիստոսի հարազատ աշակերտները:

Անվստահութիւնը՝ այն աստիճան շեշտուած է մարդոց յարաբերութիւններուն միջեւ, որ զաղտնիք մը չեն կրնար վստահիլ պարկեշտ կարծուած՝ ոչ մէկ բարեկամի: Որ կողմը դառնաս եւ որու հետ խօսիս կամ պիտի շողոքորթէ եւ կամ պիտի փորձէ իր ակնկալութիւնը բացայայտել:

Վախերը եւ վարանումները մարդուն առօրեան դարձուցած են խռովայոյզ եւ մղձաւանջներն ու անձկութիւնները համազրիշերային

տառապանք: Մարդուն եւ հասարակութեան բարոյականը կորսնցուցած է իր հակակշիռը եւ երկուքն ալ կը բարացուցեն բնութիւններու համանոյնութիւն մը:

Միայն երկնային միջամտութիւն մը կրնայ որակաւորել անոնց կեանքը:

* * *

Սանձարձակութեան եւ շփոթութեան մը ամէն տեսակ ապօրինութիւն թոյլատրելի եւ հնարաւոր է:

Նիւթին աստուածացումը եւ անիրաւ շահերու գիւնդութիւնը ստեղծած են այնպիսի խօլարշաւ մրցակցութիւն, որ հողին նայելով կը տեսնեն իրենց մարմնոյն մահը ու աչքերը երկինք յարելով՝ կը տեսնեն իրենց կեանքին փառաւորումը եւ յաւերժութիւնը:

Աստուծոյ հոգիին հետ համաձուլուելով՝ կ'ըլլաս անհամեմատելի մեծութիւն մը: Ալ՝ չես զգար մինակ եւ յուսալքուած, աղքատ եւ կարօտ, հիւանդ ու տկար: Ան՝ քու մէջդ է եւ կը խօսի քեզի հետ խրախուսական յորդորներով: Կը գօտեպնդէ հոգիդ այնպիսի գօրութեամբ, որ կարծիք փորձութիւններու դիմաց դառնաս անառիկ բերդ մը:

Նիւթապաշտութիւնը նորագոյն դարերու մեղքը չէ: Նախաքրիստոնէական դարաշրջաններուն ալ դրամին կուռքը պաշտուած է եւ գերած մարդուն կապարացած գգայարանքները:

* * *

Երեւելի գորավար Նելսըն ապշեցուցիչ յաղթանակներ շահեցաւ ծովերու վրայ՝ ճակատամարտերու ընթացքին: Անդիմադրելի դժուարութիւններ եւ վարակիչ հիւանդութիւններ յաղթահարեց Հնդկաստանի մէջ: Ընդհարումներու ընթացքին կորսնցուց իր մէկ աչքը եւ թեւը: Չգինաթափուեցաւ ոչ մէկ ձախողութեան դիմաց եւ անվստ ու աննահանջ շարունակեց իր գրոհները, ողողելով կուրծքին տարածքը շքանշաններով:

Բայց ափսո՛ս, որ ծովերու այս անպարտելի հերոսը հիացաւ իր սիրային կիրքերէն գրաւած՝ ամուսնացած կնոջ մը հետ ունեցած իր անպարկեշտ յարաբերութիւններով: Ծովերու վրայ մեծ յաղթութիւններով դիւցազնացաւ եւ ցամա-

քի վրայ անպատուեց իր փառքը՝ բարոյական տկարութիւններով:

Մեղքը մեծ եղեր է կամ փոքր, ցաւ է, տանջանք է, դժբախտութիւն է: Կը յարուցանէ հոգիին մէջ ամպրոպային փոթորիկներ եւ կ'անդամալուծէ մարդուն կեանքը մինչեւ մահ:

Կրնա՞յ մեղքէն յարածեծուած խռոված հոգի մը ուրախ ըլլալ:

Ազատ ես ամէն հաճոյք եւ ուրախութիւն վայելել, միայն՝ մի թողուր որ փորձութիւնը մօտենայ ու դպչի հոգիիդ եւ քեզ բաժնէ Տիեզերական իմաստութեանէն:

Ի՞նչպէս կրնայ սիրտ մը իր տրոփումներով քաղցրացնել կեանքը, երբ մէջդ հիւանդ ու հաշմած է Աւետարանին հաւատքը:

Երբ Աստուած կը ջնջես կեանքէդ՝ կը դառնաս անպաշտպան որբ մը: Անառակ Որդիին խոզարած մը աշխարհի մարդոցմէ նզովուած:

Աստուած առանց կեանքի, կեանքը առանց Աստուծոյ, հոգիին մարտիրոսութիւնն է:

Սատանան, որ մեղքին բռնակալն է, իր գոհերը կ'որսայ իր մէկ ձեռքին հինգ մատները միայն գործածելով:

Երկու մատներով կը գրցէ գոհին աչքերը, որ չտեսնէ Աստուծոյ լոյսը, միւս երկու մատներով կը փակէ անոր ականջները, որ չլսէ Աւետարանին պատգամները եւ հինգերորդ մատն ալ կը դնէ անոր շրթունքներուն վրայ եւ կ'ըսէ, ետեւէս եկուր:

Եւ միամիտ գոհը՝ կոյր, խուլ, համր կը հետեւի սատանային ու իր լարած ծուղակին մէջ կ'իյնայ ու կը կորսուի:

Մեղաւորները, կ'անիրաւեն ու կը հարստանան եւ անմեղները, կը տուժեն ու կ'աղքատանան:

Դուք լսե՞ր էք, որ հայ բարեպաշտ հոգեւորականը իր համեստ թոշակով եւ անկայուն պաշտօնով՝ հարստանայ եւ մեծահարուստի կոչում ստանայ:

Հեռաւոր եւ մերձաւոր անցեալը ցոյց չի տար նման նիւթապաշտ մը՝ կրօնական ասպարէզի մէջ: Բայց ներկան՝ կը յայտնաբերէ քանի մը շլացուցիչ նմուշներ, որոնք ճշմարտութեան ճանապարհին վրայ մեղանչելով՝ յաջողած են ճառագայթել կրեստոսեան կատարներու վրայ:

ՀԱՃՆՈՅ ՀԱՅՐԵՆԱԿՑԱԿԱՆ ՄԻՈՒԹԻՒՆ

Վ Ի Ծ Ա Կ Ա Յ Ա Ն Ո Ւ Թ Ի Ի Ն
Ի նպաստ
Նոր Հաճնոյ Մեծն Մուրատ դպրոցին

Մեծ Պարգել՝ 2008 Lexus ES 350
Ա. Պարգել՝ Երկու Երթ ու Դարձ Տոմս Հայաստան
Բ. Պարգել՝ Laptop Համակարգիչ
Գ. Պարգել՝ 42" Plasma TV

Վիճակահանութիւնը տեղի պիտի ունենայ
Կիրակի, Մարտ 16, 2008, Կ.Ե. Ժամը 8:00ից
Verdugo Hills Country Club
400 West Glenoaks Blvd., Glendale, CA 91202

Նոր Հաճն Բաղաքի 50-ամեակի տօնակատարութեան առիթով

Նուէր՝ \$100
Տոմսերը ստանալու համար հեռաձայնել՝
(626) 351-0695, (626) 577-7234, (818) 243-7029

ԱՆՍՈՎՈՐ ԱՍՏԻՃԱՆԻ ՄԸ ՊԱՏՄՈՒԹԻՒՆԸ

Շարունակուած էջ 14-էն

է... որ մենք՝ հոգեւորական թէ աշխարհական... առաջնորդ թէ անհատ, անտեղեակ կը մնանք մեր հոգեւոր հարուստ գրականութենէն, կամ մակերեսային երեւոյթով, բառացիօրէն կ'ըմբռնենք իմաստն անոնց: Որովհետեւ հեռացած ենք «Լոյսի շնորհ»էն, ճշմարիտ հաւատքէն, մեր դաւանանքէն: Մեր Սուրբ Հայրապետներու հաստատած կանոնները, ոչ մէկ արժէք ունին այսօր: Պահքերը, պէտք չէ խոչընդոտեն եղեր մեր օրերու նիւթական ակնկալիքները: Նիւթը՝ այնքան հրա-

պուրիչ ու կախարդիչ եղած է՝ որ աղօթքը դարձուցած է շրթունքային ծառայութիւն, իսկ հաւատքը... նորաձեւութիւն: Ահա թէ ինչու... այս «Աստիճանի մը Պատմութիւնը» որպէս հեքիաթ թուի եւ գուցէ ծիծաղելի դառնայ թերահաւատներուն համար:

Օդին մէջ բարձրացող աստիճանը կանգուն է այսօր եւ 130 տարի է ի վեր կը պատմէ կաթողիկէ Լօրէթի Բոյրերուն հաւատքի գօրութիւնը, եթէ... ակնայ ընկնք լսելու: Եկեղեցւոյ հասցէն է, Loretto Chapel, 207 Old Santa Fe Trail, Santa Fe, New Mexico, 87501:

ՀԱՅԿԱԿԱՆ ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԸՆԴՀԱՆՈՒՐ ՄԻՈՒԹԻՒՆ ARMENIAN GENERAL BENEVOLENT UNION

Բեղմնաւոր Անցեալ
Proud Past



Լուսաշող Ապագայ
Exciting Future

AGBU SOUTHERN CALIFORNIA DISTRICT COMMITTEE

Proudly Presents the 4th Annual

AGBU SOCIETY DINNER

Honoring

YENOVK BALIKIAN

Saturday, October 13, 2007 - 7PM

HUNTINGTON RITZ CARLTON HOTEL

DONATION \$1,000 (2 tickets)

626.794.7942

AGBU SAN DIEGO CHAPTER presents the 2nd Annual

"HYE SOCIETY" GALA DINNER DANCE

Guest Speaker

DR. HAROUTUNE ARMENIAN

President of the American University of Armenia

SATURDAY, SEPTEMBER 22, 2007, 6:45PM

The Grand Ballroom, Marriott Del Mar - 11966 El Camino Real, San Diego, CA 92130

**KHACHIK ABRAHAMYAN ASHOT AVAGYAN GAREGIN DAVTYAN MARINE DILANYAN HERMINE DEMIRTSHYAN
GAGIK GHAZANCHYAN ALBERT HAKOBYAN MAYIS MKHITARYAN LILIT SOGHOMONYAN**

ARMENIAN GENERAL BENEVOLENT UNION, SOUTHERN CALIFORNIA DISTRICT COMMITTEE PRESENTS

9 CONTEMPORARY ARTISTS FROM ARMENIA

AN EXTRAORDINARY ART EXHIBITION

FRIDAY, SEPTEMBER 28, 2007, 7-11PM
SEPTEMBER 29 & 30, 3-10PM

AGBU ALEX MANOOGIAN CENTER
2495 E. MOUNTAIN ST., PASADENA, CA 91104
TEL 626.794.7942

Armenian General Benevolent Union / Glendale - Pasadena Chapter Presents

JOHN GABRIEL

the illusionist

OCTOBER 12 - 13 - 14 - 19 - 20 - 21, 2007

AGBU ALEX MANOOGIAN CENTER - 2495 E. MOUNTAIN ST., PASADENA, CA 91104

For tickets and more information, please call: 626.794.7942

ՄԱՐԶԱԿԱՆ

ՖՈՒԹՊՈՒԼ

ԵՐՐՈՊԱՅԻ ԵՐԻՏԱՍԱՐԴԱԿԱՆ ԱՌԱՋՆՈՒԹԵԱՆ ԸՆՏՐԱԿԱՆ ՓՈՒԼ ՐԱՅԱՍՏԱՆ - ՉԵԽԻԱ 1-1

Երեւանի վազգէն Սարգսեանի անունի հանրապետական մարզադաշտում Սեպտեմբերի 8-ին կայացած Եւրոպայի առաջնութեան ընտրական խաղում Հայաստանի ֆուտբոլի երիտասարդական հաւաքականը 1:1 հաշուով ոչ-ոքի խաղաց Չեխիայի ֆուտբոլի երիտասարդական հաւաքականի հետ:



Խաղի 44-րդ րոպէին վարդան Պետրոսեանը, ստանալով շատ լաւ փոխանցում խաղադաշտի կենտրոնից եւ գոնուելով մրցակցի տուգանային հրապարակում, գլխի գեղեցիկ հարուածով գնդակը վարպետորէն ուղարկեց Չեխիայի հաւաքականի դարպասը՝ 1:0:

Երկրորդ խաղակէստում, խաղի 55-րդ րոպէին չեխ թոմաշ Ռայկոյան գրագէտ հարուածով մօտ տարածութիւնից եզրափակեց իր թիմի գրոհը՝ 1:1:

ՐԱՅԱՍՏԱՆ - ՌԻՔՐԱԻՆԱ 0-2

Սեպտեմբերի 12-ին ֆուտբոլի Հայաստանի երիտասարդական հաւաքականը «Հանրապետական» մարզադաշտում 0:2 հաշուով պարտուեց Ռեքրաինայի հաւաքականին: «Եւրո-2009»-ի ընտրական փուլում սա հայ ֆուտբոլիստների 2-րդ պարտութիւնն էր:

Ռեքրաինան 38-րդ րոպէին բացեց խաղի հաշիւը: Դարպասապահ Մելքիսեթեանի անփութ խաղից օգտուելով կոլի հեղինակ դարձաւ Յարոշենկոն: 65-րդ րոպէին Հայաստանի հաւաքականի դարպասին նշանակուեց 11 մետրանոց տուգանային հարուած, որը վստահորէն իրացրեց Օլէնիկը:

Table with 7 columns: Team, Goals, Assists, Yellow Cards, Red Cards, Fouls, Offsides. Rows include Ռեքրաինա, Թուրքիա, Հայաստան, Չեխիա, Լիխթենշտայն.

ՖՈՒԹՊՈՒԼԻ ԸՆԿԵՐԱԿԱՆ ՐԱՆԴԻՊՈՒՄ

ԿԻՊՐՈՍ - ՐԱՅԱՍՏԱՆ 3-1

Ֆուտբոլի Հայաստանի ազգային հաւաքականը ընկերական խաղում 1:3 հաշուով պարտուեց Կիպրոսի ընտրանուն: Լառնաքայում կայացած այս մրցավէճի հաշիւը 31-րդ րոպէին բացել է Միչէլը: 4 րոպէ անց Ռոբերտ Արզումանեանին յաջողուեց է հաւասերեցնել հաշիւը: Ի դէպ, կենտրոնական պաշտպան Արզումանեանը հաւաքականի վերջին 4 հանդիպումներում խփում է իր 3-րդ գնդակը:

41-րդ րոպէին Օկասը կրկին առաջ է մղել Կիպրոսին, իսկ 53-րդ րոպէին Կոնստանտինոն արդէն 3-րդ անգամ է գրաւել Հայաստանի դարպասը:

Հայաստանի հաւաքականի գլխաւոր մարզիչ Եան Պորտերֆիլդ ծանր հիւանդութեան պատճառով (ան մահացաւ այս շաբաթ - լուրը էջ 4) չէր ժամանել խաղին եւ նրա փոխարէն գլխաւոր մարզչի պարտականութիւնները կատարում էին Թոմ Ջոնսը եւ վարդան Մինասեանը:

ԲՈՆՑՔԱՍԱՐՏԻ ԵՐՐՈՊԱՅԻ ՊԱՏԱՆԻՆԵՐՈՒ ԱՌԱՋՆՈՒԹԻՒՆ ՐԱՅԱՍՏԱՆԻ ԲՈՒՈՐ ՆԵՐԿԱՅԱՑՈՒՑԻՉՆԵՐԸ ՄՐՑԱՆԱԿԱԿԻՐ

Անգլիական Պորտսմութ քաղաքում անցկացուած բոնցքամարտի Եւրոպայի կրտսեր տարիքի պատանիների առաջնութեանը մասնակցած 12 երկրների թւում էին նաեւ Հայաստանի մարզիկները: Նրանք մեծ վերելքով հանդէս եկան: Մեր վեց բոնցքամարտիկներն էլ դարձան մրցանակակիրներ: Բոլորից յաջողը վանաձորցի Արամ Պապոյեանի ելույթն էր: 50 կգ քաշային կարգում նա դարձաւ Եւրոպայի ախոյեան: Նրա համաքաղաքացի Դաւիթ Շահբաղեանը (41 կգ) արժանացաւ արծաթէ մետալի: Բրոնզէ մետալակիրներ դարձան Ազատ Խաչատրեանը (Երեւան, 44 կգ), Դաւիթ Մաղաթեանը (Սեւան, 38 կգ), Սեւակ Միրոյեանը (Էջմիածին, 40 կգ) եւ Ջոնիկ Տոնոյեանը (Գյումրի, 48 կգ):

Մեր հաւաքականը գլխաւորում էր Ստեփան Աթոյեանը: Թիմային հաշուարկում ՀՀ հաւաքականը զբաղեցրեց 3-րդ տեղը՝ իրենից առաջ թողնելով Ռուսաստանի եւ Անգլիայի բոնցքամարտիկներին:

Advertisement for HARUT DER-TAVITIAN, License #0B28270. Address: 1807 W. Glenoaks Blvd., Suite 202, Glendale, CA 91201. Contact: Tel: 818/502-3233, Fax: 818/502-3244, Pgr: 818/608-9898, info@excelhye.com, www.excelhye.com. Services: AUTO * HOME * LIFE * HEALTH * DISABILITY * COMMERCIAL.

ԵՐՐՈՊԱԿԱՆ ՖՈՒԹՊՈՒԼ ԵՐՐՈ - 2008 ԶՏՈՒՄԻ ՄՐՑՈՒՄՆԵՐ

Table A: ՍԻՐԱԿ Սեպտեմբեր 8. Սերպիա - Ֆինլանտա 0-0, Փորթուկալ - Լեհաստան 2-2, Սեպտեմբեր 12. Ֆինլանտա - Լեհաստան 0-0, Ղազախստան - Պելճիքա 2-2, Փորթուկալ - Սերպիա 1-1.

Table A: Սեպտեմբերի դասաւորումը. Լեհաստան 11 6 3 2 17-9 21, Ֆինլանտա 11 5 4 2 11-6 19, Փորթուկալ 10 4 4 2 19-9 17, Սերպիա 10 4 3 2 13-8 16, Պելճիքա 10 3 2 5 10-14 11, Հայաստան 8 2 2 4 4-8 8, Ղազախստան 10 1 4 5 8-15 7, Ազրայճան 8 1 2 5 4-17 5.

Table B: ՍԻՐԱԿ Սեպտեմբեր 8. Իտալիա - Ֆրանսա 0-0, Սկոտլիա - Լիթվանիա 3-1, Վրաստան - Ուքրաինա 1-1, Սեպտեմբեր 12. Լիթվանիա - Ֆարո Կղզիներ 2-1, Ֆրանսա - Սկոտլիա 0-1, Ուքրաինա - Իտալիա 1-2.

Table B: Սեպտեմբերի դասաւորումը. Սկոտլիա 9 7 0 2 17-7 21, Իտալիա 9 6 2 1 15-7 20, Ֆրանսա 9 6 1 2 15-3 19, Ուքրաինա 8 4 1 3 10-9 13, Լիթվանիա 9 3 1 5 7-11 10, Վրաստան 9 2 1 6 14-15 7, Ֆարո Կղզիներ 9 0 0 9 3-29 0.

Table G: ՍԻՐԱԿ Սեպտեմբեր 8. Մալթա - Թուրքիա 2-2, Մոլտաւիա - Նորվեկիա 0-1, Հունգարիա - Պոսնիա 1-0, Սեպտեմբեր 12. Նորվեկիա - Յունաստան 2-2, Թուրքիա - Հունգարիա 3-0, Պոսնիա - Մոլտաւիա 0-1.

Table G: Սեպտեմբերի դասաւորումը. Յունաստան 8 6 1 1 14-7 19, Թուրքիա 8 5 2 1 21-8 17, Նորվեկիա 9 5 2 2 20-8 17, Պոսնիա 9 4 1 4 14-16 13, Հունգարիա 9 3 0 6 8-17 9, Մալթա 8 1 2 5 7-17 5, Մոլտաւիա 9 1 2 6 5-16 5.

Table D: ՍԻՐԱԿ Սեպտեմբեր 8. Կալէս - Գերմանիա 0-2, Սան Մարինո - Չեխիա 0-3, Սլովակիա - Իրլանտա 2-2, Սեպտեմբեր 12. Սլովակիա - Կալէս 2-5, Կիպրոս - Սան Մարինո 3-0, Չեխիա - Իրլանտա 1-0.

Table D: Սեպտեմբերի դասաւորումը. Գերմանիա 8 7 1 0 31-4 22, Չեխիա 9 6 2 1 19-4 20, Իրլանտա 9 4 2 3 14-11 14, Կալէս 8 3 1 4 13-13 10, Սլովակիա 9 3 1 5 20-20 10, Կիպրոս 8 3 1 4 13-16 10, Սան Մարինո 9 0 0 9 1-43 0.

Table E: ՍԻՐԱԿ Սեպտեմբեր 8. Անգլիա - Իսրայէլ 3-0, Ռուսաստան - Մաքետոնիա 3-0, Խրովակիա - Էսթոնիա 2-0, Սեպտեմբեր 12. Անտորրա - Խրովակիա 0-6, Անգլիա - Ռուսաստան 3-0, Մաքետոնիա - Էսթոնիա 1-1.

Table E: Սեպտեմբերի դասաւորումը. Խրովակիա 9 7 2 0 24-4 23, Անգլիա 9 6 2 1 18-2 20, Ռուսաստան 9 5 3 1 14-4 18, Իսրայէլ 9 5 2 2 17-10 17, Մաքետոնիա 9 2 2 5 7-11 8, Էսթոնիա 9 0 1 8 1-17 1, Անտորրա 8 0 0 8 1-24 0.

Table Z: ՍԻՐԱԿ Սեպտեմբեր 8. Լաթվիա - Հիւս. Իրլանտա 1-0, Իսլանտա - Սպանիա 1-1, Շուէտ - Տանիմարք 0-0, Սեպտեմբեր 12. Իսլանտա - Հիւս. Իրլանտա 2-1, Տանիմարք - Լիխթենշտայն 4-0, Սպանիա - Լաթվիա 2-0.

Table Z: Սեպտեմբերի դասաւորումը. Շուէտ 8 6 1 1 17-4 19, Սպանիա 9 6 1 2 16-7 19, Հիւս. Իրլանտա 9 5 1 3 14-11 16, Տանիմարք 8 4 2 2 13-5 14, Իսլանտա 9 2 2 5 8-17 8, Լաթվիա 8 2 0 6 5-7 6, Լիխթենշտայն 9 1 1 7 5-25 4.

Table I: ՍԻՐԱԿ Սեպտեմբեր 8. Լիքսամպուրկ - Սլովակիա 0-3, Պելճուսիա - Ռումանիա 1-3, Հոլանտա - Պուլկարիա 2-0, Սեպտեմբեր 12. Սլովակիա - Պելճուսիա 1-0, Պուլկարիա - Լիքսամպուրկ 3-0, Ալպանիա - Հոլանտա 0-1.

Table I: Սեպտեմբերի դասաւորումը. Ռումանիա 8 6 2 0 17-5 20, Հոլանտա 8 6 2 0 11-2 20, Պուլկարիա 9 5 3 1 14-6 18, Ալպանիա 8 2 3 3 8-7 9, Պելճուսիա 9 2 1 6 11-19 7, Սլովակիա 8 2 1 5 8-11 7, Լիքսամպուրկ 9 0 0 9 1-20 0.

ՄԱՐԱԶԴ

ՅԱՐՈՒԹԻՒՆ ՍԻՄՈՆԵԱՆ
(Ծնեալ 1921ին Այնթապ)

Սրտի դառն կակիծով կը գուժենք մեր սիրեցեալ ամուսնոյն, հօր եւ հարազատին՝ **ՅԱՐՈՒԹԻՒՆ ՍԻՄՈՆԵԱՆ**ի մահը, որ պատահեցաւ Կիրակի, 2 Սեպտեմբեր, 2007ին:

Յուզարկաւորութեան արարողութիւնը տեղի պիտի ունեայ Շաբաթ, Սեպտեմբեր 15, 2007 առաւօտեան ժամը 10:30ին, Ս. Պետրոս եկեղեցոյ մէջ, (17231 Sherman Way, Van Nuys), ապա թաղումը Hollywood Hills Forest Lawn գերեզմանատան մէջ (6300 Forest Lawn Dr.):

Սգակիրներ՝
Այրին՝ Պէթթրիս Սիմոնեան
Զաւակները՝ Սեդա Սիմոնեան
Թալին եւ Վարդան Թէլեան
Յովան Սիմոնեան
Խնամին՝ Ժոզէֆ Թէլեան
Նելլի եւ Մասիս Միրիճանեան
Եւ համայն Սիմոնեան, Ապաճեան, Ժիրագո, Շիթիլեան, Գասպարեան, Թէլեան, Միրիճանեան եւ համայն հարազատներ ու բարեկամներ:

«ՅՈՒՅԻՈՐ ԱՌԱՋՆՈՐԴԸ ՊԵՏԷ Է ԻՐ ՏԵՂՈՒՄ ԼԻՆԻ»

Շարունակուած էջ 5-էն

այսօր Արցախի յատկապէս գիւղերում աւելի քիչ երիտասարդներ կան, քան պատերազմի ընթացքում: Պատերազմ յաղթած երիտասարդներն այսօր իրենց ազատագրած հողից հեռացել են: Որպէս հոգեւոր առաջնորդ ինչպէ՞ս կը բացատրէք այդ երեւոյթը:

-Ոչ միայն Արցախի, այլեւ Հայաստանի, ՌԴ-ի, Վրաստանի, ինչպէս ան եւ բազմաթիւ երկրների գիւղական շրջաններում նոյն վիճակն է: Պատկերացրէք, գիւղացին ունի 4 գաւակ, որոնք պէտք է ամուսնանան, ընտանիք կազմեն: Ինչպէս պէտք է գիւղացին իր բոլոր երեխաներին ապահովի տնով, ապրուստով: Նա չունի գումար, իսկ պետութիւնն էլ ի վիճակի չէ աջակցել: Երիտասարդները ստիպուած հեռանում են: Դա ոչ միայն Արցախի գիւղական շրջանների, այլեւ համազգային խնդիր է: Այսօր Երեւանի բնակչութեան 60-70 տոկոսը գիւղերից եկածներ են:

-Ատրպէյճանի կազմում ապրելով՝ արցախցիները տասնամեակներ շարունակ զրկուած էին եկեղեցի յաճախելուց: Այս տարիների ընթացքում ի՞նչ փոփոխութիւններ են տեղի ունեցել Արցախի հոգեւոր կեանքում:

-Բաւականին մեծ ջանք է թափուել, եւ Փառք Տիրոջ, այսօր մենք բաւականին մեծ թիւով հաւատացեալներ ունենք, որոնք ծոմ են պահում, ուխտի են գնում, հաւատքի են եկել: Յաւուր, բոլորը չեն, որ համապատասխան հոգեւոր գիտելիքներ ունեն: Դժուար 150 հազարին միանգամից կրթել: Այսօր մեր երազանքից դեռ շատ հեռու ենք:

-Ի՞նչ է խանգարում Ձեր երազանքը իրականացնելու համար:

-Աւելի մեծ կարողութիւն-

ներ են անհրաժեշտ՝ քարոզչութիւն իրականացնելու ու կրօնական գիտելիքներ մատուցելու համար: 70 տարիների ընթացքում գրեթէ 3 սերունդ գրկուած է եղել կրօնական տարրական գիտելիքներից: Այսօր մենք պէտք է արցախցիներին վերադարձնենք իրենց պայնական հոգեւոր ժառանգութիւնը:

-Պատերազմի ընթացքում, երբ Շուշին դեռ ազատագրուած չէր եւ ատրպէյճանցիները ռմբակոծում էին Ստեփանակերտը, Դուք շարունակուում էիք մնալ Ստեփանակերտի ակերուած առաջնորդարանում, քաջ գիտակցելով, որ ամէն րոպէ կարող եք զոհուել: Ինչո՞ւ էիք այդպէս վարուում:

-Ես իրաւունք չունէի իջնել նկուղային հարկ: Հոգեւոր առաջնորդը պէտք է իր տեղում լինի, որ կարողանայ ոգեւորել ժողովրդին, հակառակ դէպքում ժողովուրդը չի գա քո հետեւից:

-Չէ՞ք կարծում, որ սոցիալական խնդիրներն այսօր ընկճել են պատերազմ յաղթանակած Արցախի ժողովրդին:

-Այո կան սոցիալական խնդիրներ: Մենք տեսել ենք պատերազմ, սարսափելի շրջափակում, բայց այդ ամէնը յաղթահարել ենք: Փառք Աստուծոյ, այսօր Արցախի գիւղերի 70 տոկոսը զազաֆիկացուած է, կենսամակարդակը բարձրացել է: Ամենամեծ դժուարութիւնը յաղթահարուած է: Արդեօք այդ խնդիրները լուծուած են Հայաստանի ամբողջ տարածքում: Ղարաբաղը պարտաւոր է շարժուել ժողովրդավարութեան ճանապարհով եւ լինել առաջատարը: Արցախում տիրող իրավիճակը միշտ զգօն է պահում արցախցուն:

Զրուցեց
ՎԻԿՏՈՐԻԱ ԱԲՐԱՀԱՄԵԱՆԸ

ԱՏՐՊԵՅՃԱՆՆ ԸՆԴԼԱՅՆՈՒՄ Է ԻՐ ՌԱԶՄԱԿԱՆ ԿԱՐՈՂՈՒԹԻՒՆԸ

Շարունակուած էջ 5-էն

Նա ասել է նաեւ, որ Ատրպէյճանի ռազմական բիւջէն այժմ հաւասարուել է Հայաստանի ողջ բիւջէին եւ որ այն դեռ կ'աճի ապագայում:

«Ռազմական տեսանկիւնից Ատրպէյճանը տարածաշրջանի ամենաուժեղ պետութիւնն է», - Յուլիսի 2-ին Ատրպէյճանի ոստիկանական ակադեմիայում յայտարարեց նախագահ Ալիեւը: «Հայաստանը պէտք է սա հասկանայ եւ կամովին դուրս բերի իր զորքերն այն տարածքից, որ իրեն չի պատկանում: Այդ դէպքում պատերազմ չի լինի»:

«Ոչ ոք կորուստներ կրել չի ուզում, բայց մենք ուժ ենք հաւաքում եւ ցանկացած պահի պատրաստ ենք ցանկացած գործողութիւն իրականացնել: Ատրպէյճանը երբեք չի համաձայնի ստատուս-քվոյի պահպանմանը»:

2004 թուականի վիճակագրութեան համաձայն, Ատրպէյճանի զինուած ուժերում կայ 78000 զինծառայող եւ 4000 քաղաքացիականներ:

Ատրպէյճանը գնում է նոր զէնք եւ սարքաւորումներ, այդ թւում նաեւ՝ 12 հեռահար բազմահրթիռային համակարգ, նոր հրետանի, հակատանկային զէնք, Տ-72 տանկեր եւ ՄիԳ-29 կործանիչներ:

Ինչ վերաբերում է Եւրոպայում սովորական սպառազինութիւնների համաձայնագրի խախտմանը, ապա Ատրպէյճանի ԱԳՆ խօսնակ Խազար Իբրահիմն ասաց IWPB-ին, որ սրանում պէտք է մեղադրել Հայաստանին, որը Լեռնային Ղարաբաղում զինուած ուժեր ունի:

«Ատրպէյճանին պատկանող գրաւեալ տարածքներում կան զինուած ուժեր, որոնք խախտել են թէ՛ տարածքային, թէ՛ ազգային սահմանները: Եւ այդ ուժերը պատկանում են Հայաստանին», - ասել է նա: «Դրանք գերազանցում են թէ՛ Ատրպէյճանի, եւ թէ՛ Հայաստանի ազգային սահմանները: Հայաստանը սրանով կարողացել է թաքցնել իր ռազմական ուժի սպառազինութիւնները, որոնք արգելուած են Եւրոպայում սովորական սպառազինութիւնների համաձայնագրով: Սրանք ընդգրկում են տանկեր, զրահամեքենաներ, հրետանի եւ ուղղաթիւներ: Ահա սրան պէտք է յատկապէս մեծ ուշադրութիւն դարձուի»:

Պատասխանելով Ատրպէյճանի հասցէին հնչող մեղադրանքներին այն մասին, թէ այն խախտում է Եւրոպայում սովորական սպառազինութիւնների համաձայնագրի սահմանափակումները, Իբրահիմն ասել է, որ համաձայնագրում նախատեսուած է, որ երկրները կարող են ոչնչացնել հին զէնքը՝ ձեռք բերելով նորը: «Բնականաբար, Ատրպէյճանը նոր զէնք է ձեռք բերում իր զինուած ուժերը ժամանակակից ստանդարտներին համապատասխանեցնելու համար», - ասել է նա: «Հին զէնքը նորով փոխա-

րինելիս ոչ միայն Ատրպէյճանը, այլ նաեւ այլ երկրներ կարող են գերազանցել սահմանափակումները: Չարժէ չափազանցնել այս խնդիրը»:

Սա մտահոգութիւն է առաջացրել նաեւ ՆԱՏՕ-ում, որի Գործընկերութիւն յանուն խաղաղութեան անհատական գործողութեան ծրագրի շրջանակներում Ատրպէյճանը պարտաւորուել է ստեղծել առաւել թափանցիկ գործող պաշտպանութեան նախարարութիւն, ինչպէս նաեւ երկրի ներսում այն կապակցութեամբ, որ ռազմական բիւջէն թափանցիկ չէ եւ հասկանալի չէ, թէ ինչի վրայ է ծախսուում ֆինանսական զգալի ներհոսքը:

Ռազմական փորձագէտ եւ պահեստի գնդապետ Իլդար Մամեդովի խօսքերով Ատրպէյճանի զինուած ուժերը գերազանցած են կադրերով, եւ չափազանց մեծ գումարներ են ծախսուում զէնքի վրայ, փոխարէնն այդ միջոցները ուղղելու զինուորականների սոցիալական կարիքներին: Մամեդովն ասում է, որ բիւջէն պայմաններ է ստեղծում կոռուպցիայի համար:

«Պահեստային սպաներ» հասարակական կազմակերպութեան ղեկավար Եաշար Ջաֆարլին նշում է, որ երկրների մեծ մասում ռազմական ծախսերը հաւասարապէս են բաշխուում զէնքի ձեռքբերման եւ զինծառայողների աշխատավարձերի ու սոցիալական կարիքները հոգալու միջեւ՝ 50/50: Ատրպէյճանում սակայն այս համամասնութիւնը խախտուած է յօգուտ զէնքի՝ 60/40 յարաբերակցութեամբ:

Պահեստային լէյտենանտ-գնդապետ/փոխգնդապետ Ուզեյր Ջաֆարովը նոյնպէս մտահոգութիւն է յայտնում զինուորների կենսապայմանների վերաբերելով:

Ատրպէյճանական բանակի լեյտենանտը ամսական ստանում է 250-300 դոլար, մինչդեռ մայրը՝ դրա կրկնապատիկը: Իսկ շարքայիններն ու սերժանտները վաստակում են ընդամէնը 5-15 դոլար:

Ջաֆարովի խօսքերով, պաշտպանութեան նախարարը պահեստի անձնակազմին դեռ պարտք է մօտ 100 միլիոն դոլար [Իւրաքանչիւրին 300-700 դոլար]:

«Պատկերացրէ՛ք, պաշտպանութեան նախարարութիւնը միայն [Պաքուի] Սաբաիլ շրջանի դատարանը աւելի քան 200 որոշում չի կատարում», - ասում է Ջաֆարովը: Ենթադրաբար պատճառն այն է, որ ֆինանսների նախարարութիւնը պաշտպանութեան նախարարութեանը չի տալիս փոխհատուցումը վճարելու համար յատկացուած գումարները:

«Դեռ աւելին, անցեալ տարուայ Յունուարին նախագահը հրաման ստորագրեց զինուորականներին յատկացուող սննդի չափաբաժինը մեծացնելու վերաբերելով, բայց այն դեռ ի կատար չի ածուել: Իւրաքանչիւր սպայ ամսական ընդամէնը 30 դոլար է ստանում սնուելու համար: Այս դէպքում ռազմական բիւջէի մեծացման իմաստը ո՞րն է»:

ՈՒԹ ՏԱՐԵԿԱՆ ԹՈՂՆԻԿԻՍ ՆՈՒԷՐԸ

Շարունակուած էջ 15-էն

յարգանք ցուցաբերելով եւ արժանի գաւակներ լինելով, ամուր ու հաստատ հիմքերի վրայ բարձրանան ընտանիքների եւ համայնքների եւ ազգային ու մարդկային առողջ կապակցու-

թիւնները: Դուք էլ շոյք ու գուրգուրէք այն ձեռները, որոնք գրկում ու պահպանում են ձեզ, պահպանէք նրանց մարդկային արժանապատուութեամբ, եւ այդ օրը հպարտութեամբ շնորհաւորէք հայրերի ու մայրերի օրը թող ամէն օր նրանք օրը լինի:

ԿԱՐՁՈՒ ՄՐԱԸ ՓԱՍՏԻՆԱՅԻ ՄԷՋ
(200 ԵՈՒԻ ԸԱՍԱՐ)

ԱՍԷՆ ՏԵՍԱԿ ԱՌԻԹՆԵՐՈՒ ԸԱՍԱՐ
1060 N. ALLEN AVE. PASADENA

ԵՆՈԱԶԱՅՆԵԼ (626) 797-7680 (626) 398-0506

ՆՈՐ ՍԵՐՈՒՆԴ ՄՇԱԿՈՒԹԱՅԻՆ ՄԻՈՒԹԵԱՆ NOR SEROUNT CULTURAL ASSOCIATION



ARMENIAN INDEPENDENCE DAY FESTIVAL

SUNDAY, SEPTEMBER 23, 2007
VERDUGO PARK, GLENDALE
11:00AM - 7:00 PM

ԵՐԳ ՈՒ ՊԱՐ
ԱՐՈՒԵՍՏԻ ԳՈՐԾԵՐՈՒ ԵՒ
ԳԻՐԲԵՐՈՒ ՎԱՃԱՌԲ
ՓՈՐՐԵՐՈՒ ԽԱՂԵՐ
ՆԱՐՏԻ ՄՐՑԱՇԱՐԲ
ՀԱՄԱԴԱՄ ՃԱՇԵՐ



Ատիս • Սաֆո • Ժօզէֆ Գրիգորեան
Սամուէլ Սահակեան • Արմէն Ալոեան
Յարութ Յակոբեան • Հրաչ Պողարեան
Մերուժան Մարգարեան • Լիլիա Պարախուճ

| | | |
|---|------------------------|---|
| GLENDALE KIA | STACY ADAMS COLLECTION | Commerce Casino THE WORLD'S LARGEST POKER CASINO |
| Glendale West Pharmacy and Medical Supply | TAMARA | GLENDALE MEDICAL PHARMACY |
| APOLITANO GRAPSEED OIL | AMGA Channel 26 | |

For more information and for booth rentals please call NSCA at (818) 391-7938